ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՈՒԼՏՈՒՐ-
ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Հ. ՍԻԼՎԱՆՅԱՆ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 1949

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԲԱԺԻՆ

U-48

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

Հ. ՍԻԼՎԱՆՅԱՆ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

1949

А II/4704

А. СИЛЬВАНЯН

ОРГАНИЗАЦИЯ МАССОВОЙ РАБОТЫ
В БИБЛИОТЕКАХ

(На армянском языке)
Ереван—1949 г.

ԴՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեր երկրում անշեղորեն և արագ բարձրանում է ժողովրդի կուլտուր-քաղաքական մակարդակը, ավելի լայն ու բազմազան են դառնում ընթերցողների պահանջները։ Ավելի բարդ խնդիրներ են դրվում գրադարանավարի առաջ կոմպլեկտավորման և ֆոնդերի կազմակերպման, գրքերի պրոպագանդայի, ընթերցանության ղեկավարման և ընթերցողների բիբլիոգրաֆիական սպասարկման ուղղությամբ։

Բանվոր և կոլխոզնիկ ընթերցողների պահանջներն ավելի խոր և բազմակողմանի բնույթ են ստանում։ Բավարարել այդ պահանջները կարող է միայն այն գրադարանավարը, որը ետ չի մնում կյանքից և անընդհատ բարձրացնում է իր գաղափարական մակարդակը և հմտանում իր գործի մեջ։

Կուլտուրական ֆրոնտի բոլոր աշխատողների, այդ թվում նաև գրադարանավարների գաղափարական, քաղաքական մակարդակի բարձրացման հիմնական հարցերը պարզ և հստակ ցույց են տրված Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումներում՝ իդեոլոգիական հարցերի վերաբերյալ, ընկեր Ժդանովի զեկուցման մեջ «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, ընկեր Ժդանովի ելույթում՝ Գ. Ֆ. Ալեքսանդրովի «Արևմտա-եվրոպական փիլիսոփայության պատմության» գրքի առթիվ կայացած դիսկուսիայում։

Իդեոլոգիական հարցերի վերաբերյալ Համկ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի պատմական որոշումներում բոլշևիկյան պարտիականության սկզբունքը նոր ուժով է առաջ քաշված և նշված։

Համկ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի առաջադրած խնդիրները կենսագործելու համար իդեոլոգիական ֆրոնտի յուրաքանչյուր աշխատողից պահանջվում է ամենից առաջ մարքս-լենինյան ուսման-

քի տիրապետումը, Մարքսի—Էնգելսի-Լենինի— Ստալինի անմահ երկերի խոր ուսումնասիրումը։

Յուրաքանչյուր գրադարանավար պետք է ուսումնասիրի նախ և առաջ «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացը», մարքսիզմ-լենինիզմի այդ հանրագիտարանը։

Գրադարանավարը պետք է լավ իմանա մարքս-լենինյան գրականությունը և կարողանա օգնել ընթերցողին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատություններն ուսումնասիրելու գործում։

Պարտիայի և կառավարության կարևորագույն որոշումները պետք է խորը կերպով ուսումնասիրեն գրադարանավարները։ Դա կօգնի նրանց կողմնորոշվելու ժամանակակից քաղաքական իրադրության մեջ, գիտակցելու մեր առաջ դրված խնդիրները, հմտորեն հանձնարարելու քաղաքական ակտուալ գրականությունը։ Սիստեմատիկ կերպով մամուլին հետևելը նույնպես անհրաժեշտ է գրադարանավարին՝ իր գաղափարական մակարդակը բարձրացնելու և իր աշխատանքը քաղաքական բովանդակությամբ հագեցնելու համար։

Սովետական գրադարանավարը պետք է լինի կուլտուրական, կրթված մարդ, նա պետք է ճանաչի գիտության և տեխնիկայի կարևորագույն բնագավառները, իմանա գեղարվեստական գրականությունը։ Նրա մտահորիզոնի ընդլայնման և գաղափարական դաստիարակման հզոր զենքերից մեկն է մեր կլասիկ և ժամանակակից գեղարվեստական գրականությունը։ Ընթերցողները, այդ գրականությունը շատ են պահանջում, սովետական գրողների լավագույն երկերը ջերմ կերպով քննարկվում են գրական-քննադատական կոնֆերանսներում։ Գրադարանավարին վիճակված է շատ աշխատել գեղարվեստական գրականության ուղղությամբ։ Գրադարանավարը պետք է իմանա գեղարվեստական գրականության կլասիկների երկերը, կարողանա այդ երկերի պրոպագանդան անել, ցույց տալ ընթերցողներին նրանց սոցիալական արժեքը, առանձին երկերի արժանիքները նրանց մեջ եղած պրոգրեսիվ և հայրենասիրական գաղափարները և այլն։

Գրադարանավարը խորը կերպով պետք է ուսումնասիրի սովետական գեղարվեստական գրականությունը, որը նկարագրում է նոր մարդուն, դաստիարակում է ժողովրդին կոմունիստական բարոյականության ոգով, օգնում է արմատախիլ անելու կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության միջից։

Դրադարանավարից պահանջվում է ընթերցողների առաջ հմտորեն բացահայտել սովետական գրականության լավագույն երկերի գաղափարական բովանդակությունը, նրանց հերոսներին դարձնել մեր ընթերցողներին մոտիկ և սիրելի:

Կլասիկ և սովետական դեղարվեստական գրականության լայն ճանաչումը ձեռք է բերվում ոչ միայն երկերի ընթերցմամբ, այլ գրականության պատմության, տեսության և քննադատության առանձին ձեռնարկների ու աշխատությունների ուսումնասիրությամբ: Միանգամայն օգտակար կլիներ դրադարանավարի համար այնպիսի ընդհանրացնող աշխատություններ, ինչպես՝ Վ. Ի. Լենինի «Գրականության մասին» ժողովածուն, А. М. Еголин «Освободительные и патриотические идеи русской литературы XIX века», «Советская литература за 30 лет» (опубликована в «трудах юбилейной сессии Академии Общественных наук), удостоенная Сталинской премии книга Б. Мейлаха «Ленин и проблемы русской литературы конца XIX—начала XX века», стенограмма публичной лекции Л. А. Плоткина «Партия и литература» և այլն:

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն «Գրականության քննադատության և բիբլիոգրաֆիայի մասին» 1940 թ. կայացրած իր որոշման մեջ նշել է բիբլիոգրաֆիայի դերը, որպես պրոպագանդայի և կոմունիստական դաստիարակության կարևորագույն միջոցներից մեկը: Բիբլիոգրաֆիան դրադարանավարի համար լավագույն մի միջոց է՝ բարձրացնելու ընթերցողների հետ տարվող աշխատանքի որակը և նրանց գաղափարական-քաղաքական մակարդակը: Ռեցենզիաների ընթերցումը, հանձնարարական գրականության ցանկերի, բիբլիոգրաֆիական ուղեցույցների և բիբլիոգրաֆիական տեսակի պարբերականների սիստեմատիկ ուսումնասիրությունը կօգնի դրադարանավարին՝ կողմնորոշվելու ընթացիկ հրատարակություններում, ավելի արժեքավոր ու ակտուալ գրականություն ընտրելու և հանձնարարելու գործում: Օրինակ՝ «Ի՞նչ կարդալ ՀամԿ(բ)Պ պատմության վերաբերյալ» ուղեցույցը կարող է դրադարանավարի համար պարտիայի պատմության ուսումնասիրման պլան լինել: Դրադարանավարը միաժամանակ կարող է այն լայնորեն հանձնարարել մարքս-լենինյան թեորիան ուսումնասիրող ընթերցող լայն մասսաներին: Ուղեցույցում նշված են Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի աշխատությունները, որոնց նկարագրությունները լրացված են մանրամասն անոտացիաներով: «Ի՞նչ կարդալ ՀամԿ(բ)Պ

պատմության վերաբերյալ» ուղեցույցը կօգնի գրադարանավարին թե մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի ինքնուրույն ուսումնասիրման, թե՛ ընթերցողների մեջ մարքս-լենինյան գրականության պրոպագանդայի գործում:

Գաղափարական մակարդակի բարձրացման շատ միջոցներ ինչպիսիք են գրքերը, թերթերը, ամսագրերը, բիբլիոգրաֆիական նյութերը գտնվում են գրադարանավարի ձեռքի տակ: Այդ միջոցների ճիշտ օգտագործման խնդրում նրան պետք է օգնեն կուլտուրայասավորական աշխատանքի բաժինները, մեթոդ. կաբինետները բայց անկախ այդ օգնությունից, որ զանազան կազմակերպություններ ցույց են տալիս գրադարանավարին, անհրաժեշտ է, որ նա մեծ և համառ աշխատանք կատարի իր գաղափարական մակարդակը բարձրացնելու, մարքս-լենինյան ուսմունքին, կուլտուրային և գրադարանագիտությանը տիրապետելու համար: Միայն այդ դեպքում գրադարանավարը կարող է հանդես գալ իր ընթերցողների առաջ որպես խորհրդատու և ղեկավար:

Այսպիսով սովետական գրադարանային աշխատողների և գրադարանների հիմնական խնդիրներն են՝

1. Անշեղորեն կենսագործել Համկ(բ)Պ Կենտկոմի որոշումները իդեոլոգիական հարցերի մասին, ամեն կերպ բարձրացնել գրադարանային աշխատանքի գաղափարական-քաղաքական մակարդակը՝ ելնելով աշխատավորության կոմունիստական դաստիարակության, մարդկանց գիտակցությունից կապիտալիզմի մնացուկների. սնոտիապաշտությունը և կրոնական նախապաշարմունքները արմատախիլ անելու կարևոր խնդիրներից, օժանդակել ժողովրդական տնտեսության վերականգնման և զարգացման հնգամյա պլանը կատարելու և գերակատարելու համար ծավալված համաժողովրդական շարժմանը:

2. Գրադարանները հատուկ ուշադրություն պետք է դարձրնեն հասարակական-քաղաքական, գիտա-բնագիտական. տեխնիկական, գեղարվեստական գրականության, գյուղատնտեսական հնգամյա պլանի, Համկ(բ)Պ Կենտկոմի փետրվարյան պլենումի որոշման մասին եղած գրականության և Միչուրինյան առաջավոր մատերիալիստական գիտության պրոպագանդայի հարցերի վրա:

3. Բոլոր գրադարաններում անհրաժեշտ է կազմակերպել դասախոսություններ և զրույցներ, գրքային ցուցահանդեսներ.

բիբլիոգրաֆիական ակնարկներ, գրական ընթերցանություններ, առանձին գրքերի քննարկումներ, կոնսուլտացիաներ, ընթերցողների կոնֆերանսներ և հանրակրթական խմբակներ. այդ աշխատանքներում ներդրավել սովետական ինտելիգենցիային՝ ստեղծելով լայն գրադարանային ակտիվ։

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մասսայական գրադարանները և առաջին հերթին շրջանային ու գյուղական գրադարանները պետք է մասսաներին տան ինֆորմացիաներ միջազգային դրության, սովետական մարդկանց, մեր կոլխոզային մասսաների հերոսական աշխատանքի, նրանց առաջ ծառացած հերթական խնդիրների մասին, պարզաբանեն պարտիայի ու կառավարության որոշումները, մարքսիզմ—լենինիզմի աշխատությունների, բոլշևիկյան պարտիայի հիմնադիրներ Լենինի և Ստալինի կյանքի ու գործունեության խորն ուսումնասիրության պրոպագանդա անեն։

Շրջանային և գյուղական գրադարանները պետք է օգնեն բնակչությանը՝ բնագիտական, գյուղատնտեսական և մյուս գիտելիքների տիրապետման գործում։ Խոշոր անելիքներ ունեն մասսայական գրադարանները Համկ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի փետրվարյան պլենումի՝ «Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության վերելքի միջոցառումների մասին» պատմական որոշման կենսագործման խնդրում, որոշում, որը հսկայական նշանակություն ունի մեր երկրի զարգացման համար և մեր կոլխոզային կյանքի ամրացման, գյուղատնտեսական մթերքների առատացման, ինչպես և պատերազմի հետևանքներն ամենակարճ ժամանակում վերացնելու և մեր երկրի ողջ էկոնոմիկան առաջ մղելու գործում։

Այսօր այդ պատմական որոշումները բոլշևիկյան պարտիայի իմաստուն ղեկավարության և սովետական ժողովրդի հերոսական ջանքերի շնորհիվ մեծապես կենսագործվել են կյանքում և արդեն տվել են առատ պտուղներ։ Այդ է ավելի անհրաժեշտ է դարձնում, որ գյուղական և շրջանային բոլոր գրադարանները սիստեմատիկ կերպով գյուղատնտեսական գիտելիքների պրոպագանդա մղեն և միաժամանակ կապ պահպանեն

տուղական գյուղատնտեսական բաժինների, ագրոնոմների, մասնագետների և կոլխոզների նախագահների ու ակտիվի հետ։ Անհրաժեշտ է կազմակերպել սիստեմատիկ ինֆորմացիաներ գյուղատնտեսական գրականության նորությունների, ամսագրերում լույս տեսած հետաքրքիր հոդվածների մասին։ Շրջանային և գյուղական գրադարանների կարևորագույն խնդիրն է՝ հասնել շրջանում, գյուղում մեծ չափերով կոլխոզային շինարարության և գյուղատնտեսության հարցերին վերաբերվող գրականություն տարածելուն։ Կոլխոզներում և սովխոզներում պետք է կազմակերպել շրջիկ գրադարանների գրականության ֆոնդ, գրքատարների միջոցով բրիգադները և օղակները ապահովել համապատասխան գրականությամբ։ Հատուկ ուշադրություն դարձնել դաշտային, սեզոնային բնակատեղերում շրջիկ գրադարաններ կազմակերպելուն, լայնորեն ծանոթացնել գյուղական աշխատավորներին այն գրականությանը, որտեղ խոսվում է մեր լավագույն կոլխոզների ու սովխոզների փորձի, գյուղատնտեսության առաջավորների և գիտնականների նվաճումների մասին։ Անհրաժեշտ է կազմակերպել նաև դասախոսություններ և զրույցներ գյուղատնտեսության հարցերի շուրջը, լայնորեն օգտագործել իլյուստրացիաները, պլակատները, դիտողական այցերը, ծավալել թերթերի և ամսագրերի հոդվածների ընթերցումը՝ կոլխոզային շինարարության հրատապ խնդիրների մասին, թե ինչպես են պայքարում սովետական գյուղի աշխատավորները պարտիայի և կառավարության որոշումները կենսագործելու համար։

Գրադարանի մասսայական աշխատանքները բազմազան են։ Գրադարանները գրքի պրոպագանդայի համար կարող են օգտագործել մասսայական աշխատանքի փորձված ձևերը, որոնց մասին մանրամասն կխոսվի այս բաժնի առանձին գլուխներում։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԶՐՈՒՅՑՆԵՐ

Բարձրաձայն ընթերցանությունը կիրառվում է ցածր պատրաստականություն ունեցող ընթերցողների համար։ Նա առաջացնում է գրքի և ընթերցանության սեր, դաստիարակում է գրական ճաշակ։

Բարձրաձայն ընթերցանությունը գրադարանի մասսայական

աշխատանքի տարածված մեթոդներից մեկն է։ Նա տեղյակ է դարձնում աշխատավորական լայն մասսաներին գրականության լավագույն երկերին. պրակտիկան ցույց է տվել, թե որքան մեծ է բարձրաձայն ընթերցանության դաստիարակող նշանակությունը, մի բան, որ օժանդակում է ընթերցողի ընդհանուր զարգացմանը և լրացնում է նրա կրթությունը։

Ընթերցանությանը, ինչպես հայտնի է, ուղեկցում է զրույցը, որն օգնում է լսողներին հասկանալու կարդացածը՝ հոդվածի կամ գրքի բովանդակությունը զուգակցելու ընթացիկ խնդիրների հետ։ Բարձրաձայն ընթերցանության թեմատիկան շատ ավելի լայն է։ Գրադարանավարը կարող է բարձրաձայն ընթերցանության նյութ ընտրել թերթերից, ժուռնալներից, գրադարանում ստացված ակտուալ նշանակություն ունեցող գրքերից, բրոշուրներից։

Օրինակ՝ լույս է ընծայվել նոր խոշոր գեղարվեստական երկ, Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա»-ն։ Գրադարանը կազմակերպում է այդ գրքի կոլեկտիվ ընթերցանությունը։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ—ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամենից առաջ անհրաժեշտ է սիստեմատիկ կերպով կազմակերպել ընկեր Ստալինի երկերի, կենտրոնական թերթերի առաջնորդող հոդվածների, Պարտիայի և կառավարության որոշումների, միջազգային տեսությունների բարձրաձայն ընթերցանությունը։ Այժմ ամբողջ երկրում սովետական ժողովուրդը խորը կերպով ուսումնասիրում է Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի «Համառոտ կենսագրությունը»։ Գրադարանների մասսայական աշխատանքի բոլոր ձևերը, հատկապես բարձրաձայն ընթերցանությունները, զրույցները և գրքի ցուցահանդեսները պետք է ունենան մի նպատակ՝ ուսումնասիրել մեծ առաջնորդի կյանքն ու գործունեությունը։

Գյուղատնտեսության վերելքի բարձրացման վերաբերյալ Համկ(բ)Պ Կենտկոմի փետրվարյան պլենումի որոշման կենսագործման, ինչպես և Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի վերջին սեսիայի և այդտեղ արված ակադեմիկ Լիսենկոյի զեկուցման կապակցությամբ մասսայական գրադարանները ամենուրեք պետք է կազմակերպեն գյու-

գատնտեսության, հողագործության, հացահատիկների մշակման և բիոլոգիական գիտությունների վերաբերյալ գրականության։ բարձրաձայն ընթերցանություններ, զրույցներ։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ—ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ, ՆՐԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Բարձրաձայն ընթերցանությունները կազմակերպվում են ոչ միայն գրադարանի ներսում, այլև ագիտկետերում, բրիգադներում, օղակներում, ձեռնարկություններում, հիմնարկություններում դաշտային կետերում, յայլաղներում և այլն։

Գրադարանավարը կազմում է գրադարանի աշխատողների դասախոսների, մանկավարժների, ակտիվ ընթերցողների կատարելիք ընթերցանությունների պլանը։

Եռամսյա պլանում ցույց է տրվում ընթերցանությունների ընդհանուր քանակը և թեմատիկան։ Ամսական պլանում նախատեսվում են ընթերցման տեղը, ժամանակը, ընթերցվելիք գրքերը ընթերցման համար անհրաժեշտ նյութերը և այլն։

Բարձրաձայն ընթերցանությունների կազմակերպման մասին տրվում է ինֆորմացիա։ Ահա ինֆորմացիայի օրինակելի տեքստը

«Գրադարանում յուրաքանչյուր հինգշաբթի ցերեկվա ժ. 5-ին տեղի է ունենում բարձրաձայն ընթերցանություն։

Մայիսի 15-ին պետք է կարդանք Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիան»։

Առանց ուշանալու եկե՛ք ընթերցմանը»։

Գրադարանը կազմում է բարձրաձայն ընթերցանությունների կայուն և սիստեմատիկ դասացուցակ։

Ընթերցավար-ակտիվիստների նկատմամբ գրադարանները պետք է ուժեղացնեն իրենց ղեկավարությունը։ Հատկապես օգնության կարիք են զգում թերթերի և ամսագրերի ընթերցավարները։ Նրանք պետք է իրազեկ լինեն քաղաքական հարցերին, կարողանան պատասխանել լսողների յուրաքանչյուր հարցին, սիստեմատիկորեն հետևեն թերթերին, տեղյակ լինեն երկրի տնտեսական, քաղաքական կյանքին, միջազգային իրադարձություններին և այլն։

Պետք է նշել, որ շատերը կարող են ծանոթ չլինել բարձրաձայն ընթերցանությունների մեթոդիկային, հետևաբար գրադարանի

խնդիրն է՝ բարձրաձայն ընթերցանությունների մեթոդիկայի վերաբերյալ սիստեմատիկ հրահանգներ տալ։ Հրահանգների կարիք են զգում ոչ միայն ընթերցավարները, այլև ընթերցանությունը վարող դասախոսները և դասատուները։ Այս բոլորից հետևում է, որ բարձրաձայն ընթերցանությունները պետք է կատարվեն պլանային և ոչ թե պատահական կերպով։

Հաշվառման լավագույն ձևը համարվում է ընթերցանության արձանագրային գրանցումը (протокольная запись), որը նշում է լսողների վերաբերմունքը, ընթերցանության առավել հաջող մոմենտները, գրանցում է լսողների առարկությունները։ Արձանագրության մեջ անհրաժեշտ է գրանցել հետևյալ տեղեկությունները —բարձրաձայն ընթերցանության կատարման տարեթիվը և տեղը, վարողի անուն-ազգանունը, լսողների թիվը և ընթերցված գրքերի անունները։ Այդ տեղեկություններին որպես լրացում կարելի է գրանցել նաև ընթերցանության ներգործած ընդհանուր տպավորությունը, զրույցի ընթացքում տրված հարցերը, գրքերի մասին հայտնած կարծիքները (արտահայտությունները), ցանկությունները հեղինակի նկատմամբ և վերջապես հաջորդ ընթերցանության վերաբերյալ առաջարկությունները։

Բարձրաձայն ընթերցանությունների-զրույցների թեմատիկան և ընթերցավարների ընտրությունը պետք է համաձայնեցնել տեղի պարտիական կազմակերպության հետ։ Գրադարանն օգնում է ընթերցավարին՝ ընթերցանության համար գրականություն ընտրելու։ Շատ հաճախ գյուղական գրադարանավարը հանդես է գալիս որպես ընթերցավար և զրուցավար։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Գրադարանավարը կամ ընթերցավարը ընթերցանության համար պետք է լայնորեն օգտագործի անհրաժեշտ հասարակական-քաղաքական գրքեր։ Առաջին հերթին Լենինի—Ստալինի և նրանց զինակիցների կենսագրությունների ուսումնասիրությունը պետք է հանդիսանան որպես բարձրաձայն ընթերցանությունների հիմնական թեմաները։ Առհասարակ պետք է բազմաղան դարձնել բարձրաձայն ընթերցանությունների թեմատիկան։ Կարելի է կազմակերպել բարձրաձայն ընթերցանություններ նաև հետևյալ թեմաների մասին, օրինակ՝ «Լենինյան—Ստալինյան Կոմերիտմիության մարտական ուղին», «Կոմերիտմիությունը հայրենիքի համար մղած

մարտերում», «Սովետական մարդու բարոյական կերպարը», «Ռուս ժողովրդի զորավարները», «Հայրենական Մեծ պատերազմը», «Ստալինյան Հնգամյակները», «Մեր Մեծ Հայրենիքը» և այլն: Հնգամյա պլանի մասսայականացումը պրոպագանդիստական աշխատանքի հիմնական մասն է. այն պետք է մասսայականացվի հետևողականորեն և որոշ սիստեմով: Գրադարանը պետք է մշակի հնգամյա պլանն արտացոլող հիմնական թեմաների բարձրաձայն ընթերցանությունների պլան:

Որոշակի թեմաների շուրջն անհրաժեշտ է առանձնացնել գրական, լրագրային և ժուռնալային հոդվածներ, ասենք, Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների մասին, որոնք ապահովում են Ստալինյան նոր Հնգամյակի կատարումը, որպես օրինակ հիշենք այդպիսի մի շարք թեմաներ՝ «Մեծ աշխատանքների պլանը», «Ստալինյան էպոխայի մարդիկ՝ որպես աշխատանքի բարձր արտադրողականության վարպետներ», «Մեր օրերի տեխնիկան», «Լուսատնտեսության նորարարները», «Միչուրինյան մատերիալիստական ուսաշավոր ուսմունքի համար», «Մենք վերափոխում ենք բնությունը» և այլն:

Համկ(բ)Պ Կենտրոնական կոմիտեն 1944 թ. գիտա-լուսավորության-պրոպագանդայի մասին ընդունած որոշման մեջ դրեց մասսաներին գիտական՝ դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքով դաստիարակելու խնդիրը, որի իրագործման հզոր միջոցներից մեկն է բնագիտության միչուրինյան մատերիալիստական ըմբռնման, աշխարհի ծագման, մարդու զարգացման ուսումնասիրման պրոպագանդան: Այդ հարցերի վերաբերյալ կարելի է վերցնել հետևյալ թեմաները՝ «Ինչպե՞ս է կառուցված տիեզերքը», «Աշխարհների առաջացման մասին», «Երկրի անցյալի մասին», «Բնությունում տեղի ունեցող անսովոր երևույթների մասին», «Կյանքի ծագման մասին», «Տեսակների ծագման մասին», «Միչուրինյան նոր պատկերացումներ ստանալու մասին», «Մեծ վերափոխողը (Միչուրինի մասին)» և շատ այլ թեմաներ:

Ընթերցման համար կարելի է վերցնել նաև գիտա-պոպուլյար թեմաներ՝ Наука и знание», «Техника молодежи» ամսագրերից: Բարձրաձայն ամենից ավելի կարդացվում են գեղարվեստական երկերը՝ ռուս և հայ կլասիկների, մյուս եղբայրական ժողովուրդների կլասիկների, սովետական գրողների ու պոետների և վերջապես արևմտաեվրոպական կլասիկների լավագույն երկերը:

Գրադարանավարի խնդիրն է՝ խստորեն մոտենալ նյութերի ընտրությանը, առաջին հերթին տալ այն հիմնականը, ինչ պետք է իմանա յուրաքանչյուր կուլտուրական մարդ, և այնուհետև հետզհետե հետաքրքիր ընթերցանությունից անցնել գիտահանրաճանաչողական նյութերին։

Բարձրաձայն ընթերցանության համար անհրաժեշտ նյութի ընտրությունը շատ պատասխանատու գործ է։ Նյութը պետք է ունենա դաստիարակող նշանակություն, գեղարվեստական տեսակետից պետք է լինի արժեքավոր, հետաքրքիր և ամենակարևորը՝ գաղափարապես հագեցած։

Ընթերցման համար անհրաժեշտ նյութը կարող է լինել տարբեր ծավալի։ Եթե տվյալ երկն ամբողջովին վերցրած ընթերցման համար մեծ է, ապա այդ դեպքում կարելի է երկը բաժանել մասերի, սակայն այնպես, որ չխախտվի հատվածների ամբողջականությունը։

Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա»-ն կարելի է ամբողջովին կարդալ, բայց միևնույն ժամանակ, բարձրաձայն ընթերցանության համար կարելի է ընտրել առանձին գլուխներ, օրինակ՝

ա) 18-րդ գլխից (էջ՝ 196—209) կարելի է կարդալ Գերմանական շտաբի այրումը Սերգեյ Տյուլենինի («Սերյոժկայի») կողմից էպիզոդը։ Այդ էպիզոդի ընթերցանությունը կարելի է սկսել հետևյալ նախադասությունից՝ «Հիվանդանոցին մոտեցել էին երկու մարդատար և մի քանի ապրանքատար մեքենաներ՝ էսկասաններով...» (էջ՝ 201) և շարունակել մինչև գլխի վերջը։

բ) 34-րդ գլխից,—Թուցիկներ տարածելը։ Սովետական մարդկանց արտաքսումը դեպի գերմանական թիկունք (էջ՝ 401—411)։

գ) 40-րդ գլխից,—Սովետական ռազմագերիների աղատագրումը գերմանական լագերից (էջ՝ 463—476)։

դ) 41-րդ գլխից,—Ինչպես Սերգեյ Տյուլենինը պոկեց ֆաշիստական դրոշը (էջ՝ 476—485)։

Որպես բարձրաձայն ընթերցանության նյութ կարելի է կարդալ նաև խոշոր երկի (օրինակ՝ Մ. Գորկու «Մանկություն», «Տառայության մեջ», «Իմ համալսարանները») տարբեր գլուխներ։

Ինագիտական գրքերը նույնպես կարելի է կարդալ գլուխնե-
ով. յուրաքանչյուր գլխի ընթերցումից հետո կարելի է պարզել,
ինչպես է ըմբռնված և յուրացված տվյալ թեման: Անհասկա-
նալի տեղերը լրացուցիչ կերպով պարզաբանվում են, և միայն
դրանից հետո կարելի է անցնել հետևյալ գլխի ընթերցմանը: Օրի-
նակ՝ Վ. Մալինինի «Մեր երկրի անցյալը և ներկան» գրքի ընթեր-
ցումը կարելի է բաժանել ըստ գլուխների՝ հետևյալ կերպ

1-ին ընթերցանություն,—«Երկրի կեղևը և հիմքը», «Ի՞նչ դի-
տենք մենք երկրագնդի կառուցվածքի մասին»—գլուխները.

2-րդ ընթերցանություն,—«Կրակ շնչող լեռները»,

3-րդ » «Պտտվո՞ւմ է արդյոք երկրի կեղևը»,

4-րդ « «Մակերեսային և ընդերկրային ջրերը»,
«Սառույցները»—գլուխները,

5-րդ ». «Ծովը»: Այսպիսի հետևողականությամբ,
ոստ առանձին գլուխների ավարտվում է ամբողջ գրքի ընթերցումը:

Վերցնենք՝ «Պատմվածքներ գիտության և նրա ստեղծագործող-
ների մասին» քրեստոմատիան, որից կարելի է ընտրել առանձին
հատվածներ և էպիզոդներ բարձրաձայն ընթերցանության համար:
Քրեստոմատիան կծանոթացնի ընթերցողներին՝ մեր երկրի և ամ-
բողջ աշխարհի մեծագույն գիտնականների կյանքի առանձին էպի-
զոդները, կօգնի լսողներին՝ կողմնորոշվելու երկրի կազմավորման
և կյանքի առաջացման բարդ հարցերում, կծանոթացնի գիտության
և տեխնիկայի նվաճումներին և այլն:

Վերևում նշված գրքերը, հանձնարարված հատվածները և գր-
լուխները բերված են որպես օրինակ և դրանցով ամենևին չի սահ-
մանափակվում գրքերի բարձրաձայն ընթերցանության ցուցակը:

ԸՆԹԵՐՑԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՏԵՔՍՏԻ ՎՐԱ

Միայն նյութի ընտրությամբ չի սահմանափակվում բարձրա-
ձայն ընթերցանության նախապատրաստումը. դա ընթերցավարի
նախնական աշխատանքի մոմենտներից մեկն է միայն:

Յուրաքանչյուր ընթերցանության կամ զրույցի համար հար-
կավոր է խնամքով պատրաստվել: Անհրաժեշտ է, որ ընթերցավարն
ամենից առաջ ծանոթանա ունկնդիրների կազմին, նրանց կյանքի և
աշխատանքի պայմաններին: Ընտրելով տվյալ լսարանին համա-
պատասխան նյութ՝ ընթերցավարն ինքը պետք է երկու-երեք ան-

դամ կարդա տվյալ նյութը, որպեսզի ընթերցանությունը լինի սահուն և արտահայտիչ։

Տեքստի յուրացումը ընթերցանության նախապատրաստման կարևոր մոմենտներից մեկն է։ Ընթերցավարը պետք է լրջորեն աշխատի տեքստի վրա։ Հաճախ ընթերցվող տեքստում պատահում են սառարերկրյա բառեր, պատմական դեմքերի և դեպքերի հիշատակություններ և այլն։ Այդ բոլորը գրի է առնվում և հանրագիտարանների, բառարանների, տեղեկատուների միջոցով նախապատրաստվում է նրանց բացատրությունը։

Ընտրված նյութի ուսումնասիրությունից հետո, անհրաժեշտ է, որ ընթերցավարը մտածի, թե ինչպիսի հարցեր կարող են տալ լսողները և պետք է նախապատրաստվել՝ այդ հարցերին պատասխանելու համար։ Հանձնարարվում է ընթերցանությունից առաջ լսողներին բացատրել ընթերցվող նյութի հիմնական նպատակը և թեման։ Այդ մասին ընթերցավարը խոսում է ներածական մասում, որը տևում է 3—5 րոպե, իսկ ծագած կարևորագույն հարցերին վերադառնում է եզրափակիչ զրույցում։

Ընթերցանությունից առաջ անհրաժեշտ է նախապատրաստել այն նյութերը, որոնք կարող են օգտակար լինել զրույցի ընթացքում, օրինակ՝ աշխարհագրական քարտեզ, գլոբուս, գրոսի նկարը, նրա համառոտ կենսագրությունը, անհրաժեշտ տեղեկություններ Հեգինակի մասին և այլն։

ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Ընթերցավարը պետք է պահպանի արտահայտիչ ընթերցանության հիմնական կանոնները—կարդա հանդիստ, պարզ և լսելի։ Եթե ընթերցանությունը տեղի է ունենում մեծ սենյակում, ապա լսողներին պետք է տեղավորել այնպես, որ ընթերցավարը տեսանելի լինի և ձայնը լավ լսվի։ Պետք է կարդալ առանց ավելորդ պաթոսի, առանց ճչոցի, անհրաժեշտ պաուզաներով, շեշտելով այն կարևոր տեղերը, որոնց վրա պետք է բևեռել լսողների ուշադրությունը։ Ընթերցման տեմպը ըստ նյութի բովանդակության պետք է փոփոխվի, օրինակ՝ այնտեղ, ուր խոսվում է դեպքերի զարգացման մասին, անհրաժեշտ է արագացնել ընթերցումը, և ընդհակառակը՝ նկարագրությունները կարդալիս՝ դանդաղեցնել։

Ընթերցավարը պետք է բացարձակապես ճիշտ կարդա, թույլ

շտա բառերի աղավաղումներ, սխալ շեշտադրումներ և այլն։ Ընթերցավարը պետք է հետևի իր միմիկային, ժեստերին. անհրաժեշտ է խուսափել ձեռքի ավելորդ շարժումներից որոնք ցրում և շեղում են լսողների ուշադրությունը։

Բարձրաձայն ընթերցանության զուգընթաց պետք է կազմակերպել գրքային ցուցահանդես, որը լրացնում է ընթերցվող գիրքը։ Գեղարվեստական երկի ընթերցման ընթացքում ցանկալի է տալ հեղինակի գնահատականը, նշելով նրա ստեղծագործության յուրահատուկ կողմերը։

Բարձրաձայն ընթերցանության միջին տևողությունը պետք է լինի 30—40 րոպե. այդ տևողությունը, (ելնելով ժամանակից, ընթերցման վայրից և ընթերցվող նյութի բնույթից) կարող է փոփոխվել՝ ավելանալ կամ պակասել։ Չափից դուրս ընթերցմամբ տարվել չի հանձնարարվում։

ԶՐՈՒՅՑ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Զրույցի նպատակն է՝ օգնել լսողներին հասկանալու կարդացված տեքստը, պարզել նրա հիմնական բովանդակությունը, ըմբռնել նրա միտքը և տալ գնահատականը։

Զրույցին անհրաժեշտ է լրջորեն նախապատրաստվել։ Ընթերցավարը կազմում է զրույցի պլանը, հավաքում է նյութեր թերթերի հաղորդումներից, տվյալներ, փաստեր տեղական կյանքից և ընտրում է զրույցի թեմային վերաբերող գրականություն՝ ուսումնասիրելու նպատակով լսողներին հանձնարարելու համար։

Զրուցավարը լսողներին պարզաբանում է նյութի հիմնական թեման, խորացնում է տեղական կյանքի փաստերով և այն շաղկապում է լսողների ամենօրյա աշխատանքների, գործերի ու նրանց հետագա անելիքների հետ։

Զրույցը սկսվում է ընթերցանությունը վերջացնելուց անմիջապես հետո։ Ընթերցավարը հարցնում է, թե կարդացված տեքստի վերաբերյալ լսողները հարցեր չունե՞ն։ Լսողների յուրաքանչյուր հարցին պետք է խելացի և հասկանալի բացատրություն տալ, իսկ եթե ընթերցավարը դժվարանա հարցերից որևէ մեկին ճշգրիտ պատասխանել, պետք է ուղղակի հայտարարի այդ մասին. հետագայում նախապատրաստելով այդպիսի հարցի պատասխանը՝ ընթերցավարը մյուս հանդիպման ժամանակ տալիս է լրիվ բացատրություն։ Պատահում է և այնպես, որ լսողները չեն առաջադրում ոչ մի հարց

չեն համարձակվում ելույթ ունենալ կամ արտահայտել իրենց կարծիքը կարդացածի վերաբերյալ։ Այդ դեպքում ընթերցավարն ինքն է հարցեր տալիս՝ պարզելու համար, թե լսողները կարդացված թեման հասկացա՞ն, թե ոչ, ի՞նչ է մնացել անհասկանալի, կարդացված նյութը առնչություն ունի՞ լսողների ամենօրյա աշխատանքների հետ և այլն։ Այսպիսով, ընթերցավարը կարդացած թեմայի վերաբերմամբ և կոլեկտիվի հարցերի միջոցով առավելապես հետաքրքրաշարժ է դարձնում կարդացված նյութը։

Հարցերը պետք է լինեն պարզ և հակիրճ։ Ջրուցավարը պետք է բացահայտի լսողների կարծիքը ընթերցված գրքի մասին և սրի նրանց ուշադրությունը դեպի ավելի երկի հիմնական բովանդակությունը։

Ջրույցը վարելու որպես օրինակ, վերցնենք հետևյալ հարցերը. Ա. Յակովլևի «Պատմվածքներ կյանքից» գրքի վերաբերյալ։

1. Ինչու՞ առաջին անգամ ավիացիային ծանոթանալը Յակովլևի մեջ հիասթափություն առաջացրեց.

2. Ի՞նչ ազդեցություն ունեցան գրքերը Յակովլևի վրա։ Ի՞նչ սովորեցրին, ինչպե՞ս օգնեցին նրան ինժեներա-կոնստրուկտորական աշխատանքում։

3. Ինչպիսի՞ դժվարություններ ստիպված եղավ հաղթահարել Յակովլևը նախքան ինքնաթիռ կառուցելը։

4. Ի՞նչը օգնեց Յակովլևին լիակատար կերպով տիրապետելու իր պրոֆեսիային։

5. Ինչպե՞ս պատահեց Յակովլևի հանդիպումը ընկեր Ստալինի հետ։

6. Ի՞նչ է սովորեցնում Յակովլևի գիրքը։

Բարձրաձայն ընթերցանությունը պետք է լսողների մեջ հետաքրքրություն առաջացնի դեպի այն հարցը, որի վերաբերյալ ընթերցողներին հանձնարարելու են գրքեր։ Օրինակ՝ կոնստրուկտոր Յակովլևի մասին կարելի է կարդալ.

Конструктор Яковлев, журнал, «Техника молодежи», 1944, № 1, стр. 23—24

Мезенцев, С.—Путь дерзаний, журнал «Политпросветработа», 1945, № 3. стр. 39—41.

Рябчиков,—В гостях у Яковлева, газ. «Комсомольская Правда», от 16 января 1946 г.

Ընթերցանությունից հետո օգտակար է դիտել կինոնկար տրվ-

ալ թեմայի վերաբերյալ. օրինակ՝ Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա» վեպի ընթերցումից հետո կարելի է դիտել «Երիտասարդ Գվարդիա» կինո նկարը։

Անհրաժեշտ է, որ գրադարանավարը հաշվի առնի լսողների պահանջները բարձրաձայն ընթերցանությունից առաջացած նրանց ցանկությունները։

ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

Գրքերի ցուցադրական ագիտացիայի համար գրադարանները կազմակերպում են ցուցահանդեսներ, որոնք մասսայական աշխատանքների փորձված ձևերից մեկն են։

Ցուցահանդեսն ընթերցողի ուշադրությունը գրավում է դեպի գրականությունը, հնարավորություն է տալիս ընթերցողին նայելու գիրքը, օգնում է ծանոթանալու այս կամ այն գրքին, ճանաչելու դրանք, և վերջապես ընտրելու անհրաժեշտ գրքեր։

Գրքային ցուցահանդեսն ընթերցողին մոտեցնում է այն գրականությանը, որը հանձնարարում է գրադարանը։ Ցուցահանդեսի համար սովորաբար ընտրում են արժեքավոր, հանձնարարված գրականություն։ Ցուցադրվող գրականությունը ոչ թե գրքերի պատահական կոմպլեկտ է, այլ որոշակի թեմայի վերաբերյալ գրականության սիստեմատիկ ընտրություն։ Այդ գրքերը դասավորվում են որոշ հետևողականությամբ ու սիստեմով. այս հանգամանքը մեծապես օգնում է ընթերցողին ճանաչելու գրքերը, հնարավորություն է տալիս կազմելու տվյալ թեմատիկայի վերաբերյալ ընթերցման պլան։ Վերջապես այն ցուցահանդեսը, որը լավ է ձևավորված, ապահովված է համապատասխան տեքստերով, տեղեկատու և պատկերազարդ նյութերով, գրավում է ընթերցողների ուշադրությունը, զարթեցնում է նրանց մեջ հետաքրքրություն դեպի այն հարցը, որի շուրջը կազմակերպված է ցուցահանդեսը։

Գրքային ցուցահանդեսները պետք է արտահայտեն հրատապ և սովետական հասարակության ուշադրության կենտրոնում գտնվող թեմաները, օր.՝ պարտիայի և կառավարության որոշումները, միջազգային այս կամ այն կարևոր իրադրությունը կամ երևույթը, հիշարժան տարեթվերը, գիտության, տեխնիկայի, էկոնոմիկայի, պատմության, գրականության և արվեստի նորագույն ու նշանակալից նվաճումները և այլն։

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Գրքային ցուցահանդեսներն իրենց բովանդակությամբ և թեմատիկայով կարող են լինել բազմազան. օրինակ՝ «Աշխատավորների դեպուտատների ընտրությունները տեղական սովետներում», Ստալինյան նոր հնգամյա պլանը», «Գյուղատնտեսության վերելքը հետպատերազմյան ժամանակաշրջանում» և այլն:

Յուրաքանչյուր գյուղական գրադարան պետք է ունենա գյուղատնտեսական գրականության ցուցահանդես, որտեղ ցուցադրվե-

Ուսումնասիրում են ժուռնալային նոր հոդվածները:

ցուն են՝ Համ(կ)Պ Կենտրոնական կոմիտեի պատմական որոշումները ագրոտեխնիկայի, հացահատիկային կուլտուրաների մշակման և գյուղատնտեսության տարբեր ճյուղերին վերաբերող գանազան գրքեր: Այդ ցուցահանդեսում պետք է արտացոլվեն գյուղատնտեսության առաջավորների, լավագույն կոլխոզների և կոլխոզնիկների աշխատանքային սխրագործությունները, աշխատանքի լավագույն փորձը՝ նոր հնգամյակի պլանների կատարման բնագավառում:

Բացի թեմատիկ ցուցահանդեսներից, գրադարանում ստացված նոր գրքերի պրոպագանդայի և ինֆորմացիայի համար կազմակերպվում են նաև գրքային նորությունների ցուցահանդեսներ, որոնք պետք է կրեն մշտական բնույթ: Նոր գրքերը ցուցահանդեսում դասավորվում են ըստ բաժինների (օրինակ՝ հասարակական-քաղաքական, արտադրական-տեխնիկական, գյուղատնտեսական, բնագիտական, գեղարվեստական, մանկական գրականություն և այլն):



Ընթերցողներ դիտում են Վ. Գ. Բելինսկուն նվիրված ցուցահանդեսը:

Ցուցահանդեսներն ըստ իրենց նշանակության, նյութերի ծավալի և ցուցադրման տևողության՝ կարող են տարբեր լինել:

Քաղաքական, տնտեսական, գիտական կարևոր նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ կազմակերպվում են մեծ ցուցահանդեսներ (հաճախ մի քանի ստենդների և ցուցափեղկերի վրա), որոնք տևում են շաբաթներ, երբեմն էլ ամիսներ.

Հիշարժան տարեթվերի, առանձին աշխի ընկնող հրատասլ դեպ-

բերի կապակցությամբ կազմակերպվում են ոչ մեծ ցուցահանդեսներ։ Առանձին դեպքերում կարելի է կազմակերպել ցուցահանդեսներ ընթերցողների առանձին, որոշակի խմբերի համար, օրինակ՝ «Օգնություն ագիտատորին—պրոպագանդիստին», «Ի՞նչ պիտի կարդան ծնողները երեխաների դաստիարակության մասին», «Գրական օգնություն բրիգադիրին, անասնապահին», «Ի՞նչ պիտի կարդա կոմերիտական ակտիվը» և այլն։ Գրքային ցուցահանդեսները կարող են տարբեր լինել ոչ միայն բովանդակությամբ, գրականության բնույթությամբ, այլև ձևով, այսինքն՝ ձևավորման տեխնիկայով։ Ցուցահանդեսների համար օգտագործում են հատուկ շարժական ստենդներ, պատի ցուցափեղկեր, ֆաներներ, պահարանների դռներ, կամ պարզապես գրադարանի պատերը։

ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՂԿԱՑՈՒՅԹԸ ՄԱՍԵՐԸ

Յուրաքանչյուր ցուցահանդես բաղկացած է լինում՝ վերնագրից, հանձնարարվող գրականությունից, թերթերից, ժուռնալներից, տնքստային և իլյուստրատիվ նյութերից (նկարներից, լուսանկարներից և այլն)։ Վերնագիրը պետք է որոշի թեման, ձևավորի ցուցահանդեսի հիմնական բովանդակությունը. վերնագիրը պետք է լինի պարզ, հստակ գրված և հակիրճ, նա պետք է արտահայտի թեմայի էությունը՝ և միաժամանակ լինի մոբիլիզացնող։ Օրինակ՝ արտադրական-տեխնիկական գրականության պրոպագանդային նվիրված ցուցահանդեսին կարելի է տալ հետևյալ վերնագիրը՝ «Ուսումնասիրենք արտադրության նորարարների առաջավոր փորձը»։ Առանձին դեպքերում վերնագրերը կարելի է ձևավորել որպես հարցեր. օրինակ՝ «Ինչպե՞ս մարդը դարձավ հսկա», «Կյանք կա՞ մյուս մոլորակների վրա» և այլն։ Ցուցահանդեսում հիմնական տեղը հատկացվում է գրականությանը՝ գրքերին, բրոշյուրներին, մամուլի հոդվածներին։ Ցուցահանդեսում անհրաժեշտ է ցուցադրել հիմնական, ամենաանհրաժեշտ, այսինքն տվյալ թեմայի վերաբերյալ հանձնարարելի գրականությունը։

Նախ պետք է ընտրել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների, պարտիայի և կառավարության ղեկավարների երկերը, խոշորագույն գիտնականների, ականավոր գրողների աշխատությունները և այլն, ապա ընտրված լավագույն գրականությունից պետք է առանձնացնել այն գրականությունը, որը համապատասխանում է

ընթերցողների տվյալ խմբի կատեգորիային, օրինակ՝ բանվոր երիտասարդներին, կոլխոզային ակտիվին և այլն։

Գրականություն ընտրելիս պետք է օգտագործել բիբլիոգրաֆիական ուղեցույցները, օրինակ՝ Համամիութենական գրապալատի հրատարակությունները՝ «Книжная летопись», «Летопись журнальных статей», «Летопись газетных статей», և այլն։

Հայկական ՍՍՌ Պետական գրապալատի հրատարակությունները՝ «Գրքի տարեգիր», «Ժուռնալային հոդվածների տարեգիր», «Թերթերի հոդվածների տարեգիր», «Հայպետհրատի հրատարակությունները ըստ տարիների. բիբլիոգրաֆիական ցանկ» և այլն։ Անհրաժեշտ է օգտագործել նաև հանձնարարական գրականության ցուցակները, օրինակ՝

«Օրինակելի ցուցակներ մարքս-լենինյան ուսմունքն ինքնուրույն կերպով ուսումնասիրողներին հանձնարարվող գրականության» Ե., 1948։

«Ի՞նչ կարդալ Համկ(բ)Պ պատմության վերաբերյալ» («Պարտիական կյանք» ՀԿ(բ)Պ կենտկոմի ամսագիր, 1948 թ. № 3, էջ՝ 59—62. №4, էջ՝ 56—64, № 5, էջ՝ 36—43 և այլն)։

Դժվարանալու դեպքում կարելի է դիմել գրադարանային մեթոդական կաբինետին, բիբլիոգրաֆիական բաժնին, շրջանային պարտկաբինետին։ Գրքերից և բրոշյուրներից բացի՝ անհրաժեշտ է ցուցադրել ժուռնալներում և թերթերում եղած տվյալ հարցերին վերաբերող հոդվածները։

Ցուցահանդեսի հիմնական թեման բաժանվում է ենթաթեմաների և բաժինների։ Օրինակ՝ նոր հնգամյա պլանին նվիրված ցուցահանդեսը պետք է կազմված լինի մոտավորապես այսպիսի բաժիններից՝ «Օրենք ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946—1950 թ. թ. հնգամյա պլանի մասին» և տեղական բաժնից՝ նվիրված տվյալ շրջանի հնգամյա պլանին։ Առանձին դեպքերում գրականությունը ցուցահանդեսում դասավորվում է ժամանակագրական կարգով։ Այդպիսի դասավորում նպատակահարմար է հատկապես այն ժամանակ, երբ ցուցահանդեսը նվիրված է պատմական թեմաներին, նշանավոր տարեթվերին, պատմական անձանց կյանքին ու գործունեությանը։ Օրինակ՝ «Ռուս

ժողովրդի հերոսական անցյալը»—ցուցահանդեսում գրականությունը կարելի է դասավորել այսպիսի հետևողականությամբ՝ «Ռուս ժողովրդի հերոսական պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ» (Ընդհանուր բաժին), «Սառցամարտը» (13-րդ դ.), «Կուլիկովյան ճակատամարտը» (14-րդ դ.), «Ռուս ժողովրդի պայքարը լեհ-շվեդական ինտերվենտների դեմ 17-րդ դ. սկզբում», «Պոլտավայի ճակատամարտը» (18-րդ դ.), «Ռուսական բանակի հաղթանակը յոթամյա պատերազմում (1756—1763)», «Սուվորովի ռազմական արշավանքները», «1812 թ. Հայրենական պատերազմը» և այլն:

Ա. Մ. Գորկուն նվիրված ցուցահանդեսը կարելի է կառուցել հետևյալ ձևով՝

1. Լենինը և Ստալինը Գորկու մասին:
2. Մ. Գորկին որպես պրոլետարական գրականության հիմնադիր:
3. Մ. Գորկին և սոցիալիստական ռեալիզմը:
4. Մ. Գորկին հայ գրականության մեջ:
5. Ա. Մ. Գորկու ստեղծագործության հիմնական շրջանները:
6. Քննադատական հոդվածներ Ա. Մ. Գորկու ստեղծագործության մասին:

Նպատակահարմար է գրքային ցուցահանդեսում տեղավորել նաև բիբլիոգրաֆիական նյութեր՝ ուղեցույցներ, հանձնարարական ցանկեր, թեմատիկ քարտարաններ, որոնք լրացնում և հարստացնում են տվյալ ցուցահանդեսի թեման: Ժուռնալներում և թերթերում կարելի է գտնել տվյալ թեմային վերաբերող արժեքավոր հոդվածներ, որոնք նույնպես պետք է տեղ գտնեն ցուցահանդեսում: Ամսագրերը ցուցահանդեսում ցուցադրվում են բաց դիրքով, այն էջից, որից սկսում է հանձնարարվող հոդվածը, իսկ թերթերը ծալվում են այնպես, որ տեսանելի լինի տվյալ հոդվածի վերնագիրը:

Բացի գրականությունից, ցուցահանդեսներում արվում են գիտատանը մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերից, պարտիայի և կառավարության որոշումներից: Ցուցահանդեսում ցուցադրվում են նույնպես թվական տվյալներ, փաստական տեղեկանքներ, դիագրամներ և այլն: Օրինակ՝ «Մեր շրջանը Ստալինյան նոր հնգամյակում» ցուցահանդեսում սովորաբար արվում են այն հիմնական ցուցանիշները, որոնք բնութագրում են տվյալ շրջանի տնտեսական և կուլտուրական զարգացումը, իսկ դիագրամների

ցուցադրումն ավելի ցայտուն է դարձնում արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդի նյութական, կուլտուրական կյանքի մակարդակի բարձրացման աճը։ Ընթերցողների հետաքրքրությունը շարժելու համար ցուցադրվում են պատկերազարդ նյութեր, պորտրետներ, լուսանկարներ, սխեմաներ, աշխարհագրական քարտեզներ և ուրիշ նյութեր, որոնք ոչ միայն գրավում են ընթերցողների ուշադրությունը, այլ և հարստացնում են ցուցահանդեսի բովանդակությունը և թեմատիկան։ Օրինակ՝ «Ռուս մեծ զորավար Ա. Վ. Սուվորով» ցուցահանդեսում պետք է տրվի Սուվորովի նկարը, Իզմայիլի գրավման սխեման, «Սուվորովի անցումը Ալպյան լեռներից», Սուրիկովի հայտնի նկարի վերարտադրությունը և այլն. կամ՝ «Մեր Հայրենիքը» թեմայով ցուցահանդեսում սովորաբար ցուցադրվում է նաև ՍՍՌՄ աշխարհագրական քարտեզը, ֆոտո նկարներ, որոնք բնութագրում են մեր երկրի առանձին շրջանները։

ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ցուցահանդեսի ճիշտ կազմակերպման հիմնական հարցը նրա սոցիալիստական պարտականությամբ և մարքս-լենինյան իդեոլոգիայով հագեցած բովանդակության ապահովումն է։ Դա ձեռք է բերվում հետաքրքիր և ակտուալ թեմայի, ինչպես և նյութերի ու գրականության ճիշտ ընտրությամբ, նրանց խորը և մտածված սիստեմով, թեմայի բազմակողմանի լուսաբանմամբ։ Ձեռնարկելով ցուցահանդեսի կազմակերպմանը՝ անհրաժեշտ է նախօրոք ծանոթանալ թեմային, կարդալ նրան վերաբերող ղեկավար հոդվածներ, գրքեր, աչքի անցկացնել բիբլիոգրաֆիական նյութերը, հանձնարարական գրականության ցուցակները, այնուհետև մշակել ցուցահանդեսի պլանը, առանձնացնել գրականությունը, ցիտատները, իլյուստրատիվ նյութերը։ Եթե պլանը կազմելիս գրադարանավարը հանդիպի որոշ դժվարությունների, պետք է դիմի կոնսուլտացիայի (շրջանային պարտ-կաբինետ, մեթոդական կաբինետ, համապատասխան մասնագետի և այլն)։ Այդ բոլորից հետո գրադարանավարը ձեռնարկում է յուրաքանչյուր բաժնից գրականություն ընտրել. միաժամանակ լայնորեն օգտագործել բիբլիոգրաֆիական ուղեցույցներ։ Այդպիսով ստացվում է հանձնարարական գրականության ցուցակ, որի հիման վրա գրադարանավարը կատարում է գրքերի ընտրությունը՝ ֆոնդերի համապատասխան բաժիններից։

Յուրաքանչյուր գիրք ստանձին ուսումնասիրում է գրադարանավարը, մանրամասնորեն զննում և գնահատում է այն։ Ընդհանրապես գրականության ընտրության գործում պահպանվում են նույն պահանջները և կանոնները, ինչ որ հանձնարարական գրականության ցանկեր կազմելիս։

Ցուցահանդեսը պետք է լինի գեղեցիկ և կուլտուրապես ձևավորված. բոլոր տեքստային նյութերը, հատվածները, լոզունգները, ցուցահանդեսի ընդհանուր վերնագիրը, բաժինների վերնագիրը պետք է գրել պարզ և գեղեցիկ տառերով։ Անհրաժեշտ է նույնպես ճաշակ և հմտություն գրքերը, բրոշյուրները, պարբերականները, մակագրությունները, իլյուստրացիաները ճիշտ դասավորելու համար։ Այդ բոլոր նյութերը պետք է տեղադրվեն և փակցվեն ստենդին այնպես, որ ցուցահանդեսը ծանրաբեռնված չլինի ավելորդ նյութերով, այլ պարզ ու հասկանալի լինի ընթերցողներին, հետևողականորեն արտահայտի ամբողջ թեման՝ բուն բաժինների։

Շատ բան իհարկե կախված է գրադարանավարից, նրա ձեռներեցությունից, հմտությունից, նրա պատրաստականությունից և ունեցած փորձից։

Եթե գրադարանը գրքային ցուցահանդեսներ կազմակերպելու համապատասխան միջոցներ և հնարավորություններ ունի, ցուցահանդեսի ձևավորման համար կարելի է ներգրավել նկարիչի։ Այդ դեպքում գրադարանավարը բացատրում է նրան ցուցահանդեսի նպատակը, ցույց է տալիս ամբողջ նյութը և ծանոթացնում է հիմնական բաժիններին, որից հետո նկարիչը պարտավոր է ներկայացնել էսքիզ (նյութերի ձևավորման նախնական պլանը), որը հաստատելուց հետո միայն նա ձեռնարկում է աշխատանքին։ Նկարիչին վճարելու միջոցներ չլինելու դեպքում, կարելի է դիմել ընթերցող ակտիվի օգնությանը։ Ընթերցողների մեջ կարող են լինել նկարչության դասատուներ, դծագրողներ, սովորողներ, գեղարվեստական խմբակի անդամներ, որոնք կօգնեն գրադարանավարին ձևավորելու ցուցահանդեսը։ Շատ հաճախ ցուցահանդեսի համար, որպես պատկերազարդ նյութ, կարելի է օգտագործել ամբողջովին, երբեմն էլ մասնակիորեն, պլակատները՝ տնտեսական-քաղաքական կամպանիաների և նշանակալից տարեթվերի կապակցությամբ։ Օրինակ՝ մեծ քանակությամբ և շքեղ հրատարակությամբ լույս են տեսել գեղարվեստական պլակատներ նվիրված՝ Մոսկվայի 800-ամյակին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ հեղափոխության 30-ամ-

լակին և ընտրական կամպանիաներին։ Գրքային ցուցահանդեսում կարելի է ցուցադրել նույնպես գեղարվեստական բացիկներ, գիտության, գրականության և արվեստի ականավոր գործիչների պորտրետներ։ Մասսայական ամսագրերի պատկերազարդ նյութերի օգտագործումը («Огонек», «Смена», «Вокруг света», և այլն) դժվարանում է նրանով, որ չի կարելի կտրել և փչացնել իլյուստրացիաները։ Դրանց օգտագործման լավագույն միջոցն է՝ նկարահանել իլյուստրացիաները, իսկ եթե այդ հնարավոր չէ, ապա նպատակահարմար է օգտագործել ամսագրերը բաց դիրքով՝ ցուցադրելով համապատասխան պատկերները։ Պատկերազարդ նյութերի ազբուքներ են դանդաղ ալբոմները, և ֆոտո իլյուստրացիաների կոմպլեկտները։ Օրինակ՝ «ՍՍՌՄ-ը մեր Մեծ հայրենիքն է» ցուցահանդեսի գրականությունը, տեքստային և պատկերազարդ նյութերը դասավորվում են հետևյալ բաժիններով՝

1. «Լենինի-Ստալինի մեծ պարտիան սովետական ժողովրդի պատմական հաղթանակների կազմակերպիչը և ոգեշնչողը»։
2. «Սովետական Սոցիալիստական պետության հզորությունը»։
3. «Սովետական մարդկանց հայրենասիրությունը»։
4. «Պայքարենք մեր հայրենիքի հետագա ծաղկման համար»։
   ա) «Սովետական երկրի բնական հարստությունները»։
   բ) «Պայքարենք Ստալինյան նոր հնգամյակը 4 տարում կատարելու համար»։

Ցուցահանդեսի յուրաքանչյուր բաժին պետք է ունենա իր ենթավերնագիրը, համապատասխան գրականությունը, իլյուստրացիաները և ցիտատները։ Բացի գրքերից՝ ցուցահանդեսի ավելի բաժնում կարելի է տեղավորել «Вокруг света» ամսագիրը Սովետական Միության մասին եղած հոդվածներով, ՍՍՌՄ ֆիզիկական կամ տնտեսական քարտեզը, Դոնբասի հանքահորերի ֆոտոնկարները, Բաքվի նավթային աշտարակները, կոլխոզային դաշտերի լուսանկարներ և այլն։ Այս կարգով ձևավորվում են նաև ցուցահանդեսի մյուս բաժինները։

Լույս է տեսել մեծ առաջնորդ և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի համառոտ կենսագրությունը։ Սովետական ժողովուրդը մեծ ոգևորությամբ ընդունեց այդ գրքի լույս ընծայումը։ Սովետական պետության և բոլշևիկյան պարտիայի հիմնադիրներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կյանքի ու գործունեության խորը ուսումնասիրությունն ունի հսկայական նշանակություն սովետական

մարդկանց մարքս-լենինյան դաստիարակության, նրանց գաղափարական կոփվածության համար։ Մեծ առաջնորդների կերպարը դաստիարակում է մեր մեջ սեր դեպի պարտիան, դեպի սովետական ժողովուրդը, դեպի սոցիալիստական Հայրենիքը. սովորեցնում է մեզ հաղթահարել ամեն տեսակի դժվարություններ՝ հանուն կոմունիզմի հաղթանակի։ Ամբողջ սովետական երկրում, նրա բոլոր անկյուններում մեծ աշխատանք է կատարվում այդ ուղղությամբ։

Բոլոր գրադարանների պատվի գործն է՝ օգնել սովետական աշխատավորությանն ուսումնասիրելու մարդկության մեծագույն հանճարների՝ Լենինի և Ստալինի կյանքն ու գործունեությունը։

Ո՞րն է գյուղական և շրջանային գրադարանների դերն այս չափազանց կարևոր խնդրի կատարման գործում։ Նախ և առաջ բոլոր գրադարանները պետք է կազմակերպեն կոլխոզներում, բրիգադներում, դաշտերում, ակումբներում զրույցներ, բարձրաձայն ընթերցանություններ և գրքային ցուցահանդեսներ՝ նվիրված Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կյանքին ու գործունեությանը։ Այս թեմայով ցուցահանդեսը կարելի է վերնագրել այսպես՝ «Բոլշևիկների պարտիայի հիմնադիրներ և առաջնորդներ Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի կյանքն ու գործունեությունը»։ Թեման պետք է ունենա իր բաժինները. ըստ բաժինների էլ կատարվում է գրքերի, ամսագրերի, թերթերի հոդվածների, իլյուստրացիաների, լուսանկարների ընտրությունը։

Այնուհետև ըստ ժամանակագրական կարգի անհրաժեշտ է ձևավորել ցուցահանդեսը, միաժամանակ ցուցահանդեսի յուրաքանչյուր բաժին պետք է բաց անել համապատասխան լոզունգներով և ասույթներով։

Եթե շրջանային կամ գյուղական գրադարանը դժվարանում է մեկ ցուցահանդեսով ընդգրկել Լենինի և Ստալինի ամբողջ կյանքն ու գործունեությունը, ապա այդ դեպքում կարելի է կազմակերպել ցուցահանդեսներ՝ նվիրված նրանց կյանքի ու գործունեության առանձին շրջաններին, օրինակ՝ «Լենինի և Ստալինի մանկության ու պատանեկության տարիները», «Լենինը և Ստալինը բոլշևիկյան պարտիայի ստեղծողներ ու կազմակերպիչներ», «Լենինը և Ստալինը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի կազմակերպիչներ ու ղեկավարներ», «Ստալինը—Լենինն է այսօր» և այլն։

Ցուցահանդեսը ձևավորվում է ցուցափեղկի վրա։ Առանձին սավառաթղթի կամ հատ թղթի վրա գրվում են ցուցահանդեսի

Գրնագիրը, բաժինների վերնագրերը, լոզունգները. այնուհետև այդ բոլորն ամրացվում է ցուցափեղկին: Ասույթները և քաղվածքները գրվում են առանձին թերթերի վրա, մոտավորապես միջին չափ ունեցող գրքի էջի մեծությամբ: Ցուցահանդեսին ավելի տպավորիչ և

Ցուցահանդեսի ցուցափեղկի առաջ:

գեղեցիկ տեսք տալու համար գրքերի վրա կամ նրանց միջև տեղադրվում են նկարներ, իլյուստրատիվ նյութեր և այլն: Ցուցահանդեսը պետք է ձևավորել ճաշակով, բովանդակալից, պատմական ոգին հետևողականությամբ և ժամանակագրական կարգով:

ԳՐՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Բավական չէ միայն կազմակերպել գրքային ցուցահանդես, անհրաժեշտ է նաև տանել, որ ցուցահանդեսը օգտագործեն տեղեկատվները: Դրա համար անհրաժեշտ է գրադարանում կազմա-

կերպվող ցուցահանդեսի մասին նախօրոք տեղեկացնել ավելի շրջանի բնակչության՝ գրադարանի մուտքի մոտ հայտարարություն փակցնելով և այլ միջոցներով։ Օրինակ՝ շրջանային թերթում, ռադիոյով կարելի է հաղորդել ցուցահանդեսի մասին, տեղեկացնել, թե ի՞նչ թեմայի շուրջը և ի՞նչ հարցեր են ընդգրկված, ինչպիսի՞ արժեքավոր գրքեր կան և որ ժամերին կարելի է դիտել ցուցահանդեսը։ Բայց այդ՝ գրադարանավարն անձամբ կարող է այդ առթիվ ելույթ ունենալ ագիտատորների և պրոպագանդիստների խորհրդակցություններում և կամ զեկուցումներից, դասախոսություններից, կինոսեանսներից առաջ, ինչպես նաև ակումբներում, շրջանի կուլտուրայի տանը և այլն։

Գրադարանավարի զրույցը ընթերցող երեխաների հետ՝ գեղային նարությունների մասին։

Աբոնեմենտի աշխատողները՝ պետք է տեղյակ դարձնեն ընթերցողներին ցուցահանդեսի մասին, խորհուրդներ տան ցուցադրված գրքերից օգտվելու և ընտրություն կատարելու վերաբերյալ։

Ցուցահանդեսը մասսայականացնելու համար անհրաժեշտ ընթերցողների մեջ ցուցահանդեսի շուրջը լայն բացատրական աշխատանք ծավալել։ Գրադարանավարն աշխույժ զրույցով կարող

ընթերցողին պատմել, թե ի՛նչ նպատակի համար է կազմակերպված ցուցահանդեսը, ու՞մ համար է նախատեսված, ինչպե՞ս են դասավորված և սիստեմավորված նյութերը։ Գրադարանավարը յուրաքանչյուր հարցի վերաբերյալ հանձնարարում է գրականություն, ցույց է տալիս գրքերը, համառոտ կերպով շարադրում է նրանց բովանդակությունը, բնութագրում է գրքերը և տալիս է նրանց գնահատականը։ Այս բոլորն ունի մի նպատակ՝ գրքի պրոպագանդ մղել, այն հանձնարարել աշխատավոր մասսաներին, օգնել մարքսլենինյան ուսմունքը տիրապետելուն, Լենինի-Ստալինի պարտիայի հերոսական պատմությունն ուսումնասիրելուն։

Հանձնարարվում է առանձին դեպքերում ցուցահանդեսն իր բոլոր նյութերով տեղափոխել և ցուցադրել աշխատավորների հավաքույթի վայրերում, օրինակ՝ դասախոսությունների, զեկուցումների, խորհրդակցությունների ժամանակ և այլն։ Գրքային ցուցահանդեսն այս վայրերում խոշոր դեր կկատարի և շատ օգտակար կլինի տվյալ դասախոսության թեմային կամ զեկուցմանը վերաբերող գրականության պրոպագանդի գործում։

Գրքային ցուցահանդեսը ձևավորելուց հետո, երբ նա բոլորովին պատրաստ է դիտելու համար, անհրաժեշտ է կազմակերպել նրա հաշվառումը։ Աբոնեմենտի կամ ընթերցասրահի աշխատակիցները հաշվի են առնում, թե ի՛նչ գրքեր են օգտագործվել, ի՛նչ չափով է մասսայականություն վայելում ցուցահանդեսը, ընթերցողների վրա ի՛նչ տպավորություն է գործում և այլն։ Այս բոլորը գրադարանավարին անհրաժեշտ է, որպեսզի նա հետագայում է՛լ ավելի հմտությամբ կազմակերպի գրքային ցուցահանդեսները, բարձրացնի նրանց որակը։

Գրքային ցուցահանդեսների կազմակերպումը աշխույժ աշխատանք է, հետաքրքիր և գրադարանավարից պահանջում է ստեղծագործ միտք, հնարագիտություն և ձեռներեցություն։

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՊԼԱԿԱՏ

Լավագույն գրքերի ընթերցանության և ցուցադրական ագիտացիայի համար գրադարաններում օգտագործվում են գրադարանային պլակատներ։

Գրադարանային պլակատը մյուս պլակատներից տարբերվում է նրանով, որ նա մատնանշում է, հանձնարարում է և որոշակի տարբերի նկատմամբ գրականության պրոպագանդ է մղում։

Պլակատները կազմվում են պատմական, քաղաքական, գյուղատնտեսական, արտադրական-տեխնիկական, բնագիտական և այլ թեմաների շուրջը*։ Օրինակ՝ գյուղատնտեսական բաժնում կարելի է վերցնել հետևյալ թեմաները՝

«Ի՞նչ կարդալ անասնապահության մասին», «ինչպե՞ս պայքարել դաշտային վնասատուների դեմ», «Ի՞նչ պետք է կարդա տրակտորիստը», «Հայցահատիկային կուլտուրաների մշակումը» և այլն։

Պլակատի թեման ընտրելուց հետո սկսվում է նրա սխեմայի կազմումը, որոշվում են պլակատի հիմնական բաժինները, վերնագրերը, ընտրվում են լոզունգներ, ցիտատներ, թերթերի հոդվածների կտրվածքներ, նշվում է նրանց դասավորությունը պլակատի սխեմայի վրա, դրա հետ մեկտեղ հաշվի է առնվում, թե ընթերցողների ինչպիսի խմբի համար է կազմվում պլակատը։ Այնուհետև պլակատի թեմայի համաձայն ընտրվում է գրականություն։ Գրականության ցուցակը կազմելուց հետո որոշվում է, թե ինչ ձևով պետք է տվյալ թեման ներկայացվի պլակատի վրա։ Եթե որոշվում է օգտագործել գրքի շապիկը, ապա կատարվում է ընտրություն և նշվում նրանց դասավորումը պլակատի սխեմայի վրա։ Երբ հնարավոր չի լինում պլակատի վրա ցուցադրել գրքի շապիկը, պետք է տալ նրա նկարագիրը, իսկ եթե այդ էլ հնարավոր չէ, այն ժամանակ պլակատի վրա գրվում են գրքերի վերնագրերը, որոնց ներքևում տեղավորվում են հանձնարարական համառոտ ծանոթագրություններ (աննոտացիաներ)։

Այն պլակատների վրա, որոնք նախատեսված են ցածր պատրաստականություն ունեցող ընթերցողների համար, դերադասելի է տալ գրքի շապիկը, կամ նրա նկարագրությունը, եթե պլակատները նախատեսվում են ավելի բարձր պատրաստականություն ունեցող ընթերցողների համար, կարելի է տալ գրականության ցուցակ՝ բլոկնոտի ձևով։

Պլակատի համար անհրաժեշտ են իլյուստրատիվ նյութեր։ Դրագարանավարը իլյուստրատիվ մասը մոնտաժում է թերթերից,

---

*) Նանորություն—Պլակատը կարող է նվիրված լինել առանձին գրողների ստեղծագործությունների պրոպագանդային, ՍՍՌՄ ժողովուրդների գրականության կլասիկներին և ժամանակակից սովետական գրականության լավագույն ներկայացուցիչներին։

Դրագարաններում կիրառվում են նաև մեթոդական բնույթ ունեցող պլակատներ. օրինակ՝ «Ինչպե՞ս օգտվել կատալոգներից», «Ինչպե՞ս ընտրել գրքեր», «Ինչպե՞ս կարդալ գիրքը» և այլն։

պարբերականներից, ինչպես և տպագրված ագիտացիոն պլակատներից կտրված նկարների և ֆոտոիլյուստրացիաների օգնությամբ։

Յուրաքանչյուր պլակատի ձևավորումը պահանջում է գեղարվեստական ճաշակ և առանձին տարրերի հմուտ դասավորություն։ Այդ աշխատանքում, հատկապես պլակատների գեղարվեստական ձևավորման գործում, գրադարանավարը կարող է ներգրավել նկարչության դասատուին, գծագրողին և ուրիշների։

Պլակատները կարելի է լայնորեն գործադրել շրջիկ գրադարանի աշխատանքում՝ ակումբներում, դաշտային աշխատանքների ժամանակ ստեղծված ժամանակավոր բնակատեղերում և շրջիկ կետերում։ Պլակատներն անհրաժեշտ են՝ նաև աբոնեմենտի բաժնում և ընթերցասրահում։

Ստորև որպես օրինակ տալիս ենք Ա. Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա»-ին նվիրված պլակատի սխեման։

ՊԼԱԿԱՏԻ ՍԽԵՄԱ

Կրասնոդոնի հերոսների անմահ սխրագործությունների մասին

(Ա. Ֆադեևի «Երիտասարդ Գվարդիա» վեպը)

Ա. ՖԱԴԵԵՎԸ ԿՐԱՍՆՈԴՈՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. ՖԱԴԵԵՎ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ

(Գրքի շապիկը)

«... Ամենուրեք պայքարում է սովետական մարդը։ Եվ «Երիտասարդ Գվարդիայի» մարտական կազմակերպության անդամները թեև ընկել են պայքարում, այնուամենայնիվ անմահ են, որովհետև նրանց բարոյական հողևկան գծերը սովետական նոր մարդու գծերն են, սոցիալիզմի երկրի ժողովրդի գծերը»։

(Фадеев А. „Бессмертие“ „Правда“, 15 сентября, 1943 г.)։

ՆՐԱՆՔ ՊԱՅՔԱՐԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

(«Երիտասարդ Գվարդիայի» դեկավարների պորտրետները)

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագիրը «Երիտասարդ Գվարդիայի» զեկավարներին և անդամներին Սովետական Միության Հերոսի կոչում շնորհելու և շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու մասին:

ԿԱՐԴԱՑԵՔ

Ա. Ա. ՖԱԴԵԵՎԻ ՄԱՍԻՆ (ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ)

Երիտասարդ Գվարդիա վեպի մասին (Բիբլիոգրաֆիա)

ԿՐԱՍՆՈԴՈՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Բիբլիոգրաֆիա)

Ծանոթություն 1. *«Երիտասարդ Գվարդիայի» զեկավարների նկարները և ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության հրամանագրի տեքստը տես 1943 թ. սեպտեմբերի 14-ի կենտրոնական բոլոր թերթերում՝* „Правда", „Комсомольская Правда", „Известия" *և այլն:*

Ծանոթություն 2. *Պլակատների համար որպես իլյուստրացիաներ կարելի է օգտագործել 1943 թ. սեպտեմբերի 14-ի* „Комсомольская Правда" *թերթը:*

ԹԵՐԹԵՐԻ ՅՈՒՑԱՓԵՂԿԵՐ

Թերթերի յուցափեղկերը քաղաքական աշխատանքի կարևոր գործոն են: Այժմ շատ բարձր է մեր երկրի աշխատավոր մասսաների քաղաքական ակտիվությունը: Ժողովուրդը ձգտում է բոլշևիկյան մամուլի ճշմարիտ և ազդեցիկ խոսքին, որը ոգեշնչում է սովետական հայրենասերներին դեպի նորանոր հերոսություններ՝ մեր երկրի վերականգնման ու Ստալինյան նոր հնգամյակի կատարման գործում:

Թերթերում հրապարակվում են ընկեր Ստալինի պատմական ելույթները, պարտիայի ու կառավարության որոշումները, որոնք պետք է իմանա յուրաքանչյուր աշխատավոր:

80—3

Թերթերն ամեն օր հաղորդում են բնակչության միջազգային գրության, սովետական մարդկանց աշխատանքային հերոսության, գիտության, տեխնիկայի, դրականության և արվեստի վերջին նորությունների մասին: Այդ նպատակով յուրաքանչյուր մասսայական, հատկապես գյուղական և շրջանային գրադարան պետք է կազմակերպի թերթը մատչելի դարձնելու գործը: Դրա ամենապարզ ձևը՝ թերթերը ցուցափեղկում փակցնելն է:

Թերթերի ցուցափեղկեր պետք է լինեն ոչ միայն գրադարանի ներսում, այլ և գրադարանի շենքի առաջ, նրա մուտքի մոտ, շրջիկ կետերում, կոլխոզային բրիգադներում:

Ցուցափեղկի թերթերը պետք է փոխվեն ամեն օր՝ նոր թերթեր ստանալուն պես: Ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, որ ցուցափեղկը դատարկ լինի, կամ հին, պեղնած թերթերի կտորները կախված լինեն այնտեղ:

Թերթերը փակցնելիս անհրաժեշտ է նկատի ունենալ՝

1. Տեղի ընտրությունը. թերթը պետք է փակցնել այնտեղ, որտեղ համեմատաբար ավելի շատ են հավաքվում ընթերցողները:

2. Փակցված թերթերը անձրևից և փչանալուց պահպանել:

3. Ցուցափեղկը նորմալ լուսավորել (պետք է խուսափել արևից, բայց և չի կարելի թերթը փակցնել վատ լուսավորված տեղում):

4. Փակցվող թերթի բարձրությունը հարմար պիտի լինի միջին հասակի ընթերցողների համար:

5. Ցուցափեղկի ամրությունը:

6. Ցուցափեղկի ապակեպատումը:

Այսպիսով, գրադարանի առաջին խնդիրն է թերթերի ցուցափեղկերի միջոցով թերթը մատչելի դարձնել մասսաներին: Թերթերից բացի գրադարանում պետք է փակցնել ՍՍՌՄ աշխարհագրական քարտեզը:

Թերթերում հաճախ են պատահում մասսայական ընթերցողին անհասկանալի բառեր, ուստի անհրաժեշտ է ունենալ տվյալ համարում եղած անհասկանալի բառերի բացատրության ցանկ:

Որպես օգնություն ընթերցողներին, գրադարանները կարող են թերթերի ցուցափեղկերի հետ ունենալ հանձնարարական գրականության ոչ մեծ ցուցակ՝ թերթերում ղետեղված կարևորագույն հոդվածների առնչությամբ:

Ընդհանրապես թերթի հետ տարվող աշխատանքի խնդիրներից

մեկն էլ լրացուցիչ գրքերի և ամսագրերի հոդվածների հանձնարարումն է՝ գրադարանի կողմից։

Բացի թերթերի ցուցափեղկերից, կարելի է պատրաստել թերթերի կտրվածքների տախտակ, կամ «Վերջին լուրերի» ցուցափեղկ։

Ցուցափեղկը կամ թերթերի կտրվածքների տախտակը կարող է ունենալ մշտական բաժիններ՝ օրինակ. «Պարտության և կառավարության որոշումներ», «Մի՛ջազգային դրություն», «Ընթացիկ քաղաքականության և ժողովրդական տնտեսության հարցեր», «Գիտություն և տեխնիկա», «Գրականություն և արվեստ» և այլն։

Անպայման պետք է ունենալ տեղական բաժին՝ «Մեր շրջանում», «Մեր գյուղում», «Մեր շրջանի գյուղատնտեսության առաջավորների փորձը» և այլն։ Վերոհիշյալ բաժինների հոդվածները. դրանց նկարագրությունները լրացվում են իլյուստրացիաներով. լուսանկարներով և այլն։

. Թերթերի կտրվածքների տախտակը կարելի է հատկացնել նաև մեկ թեմայի. օրինակ՝ «Դարնանացան», «Բերքահավաք», «Ինագիտական հարցեր», «Գյուղատնտեսության հարցեր» և այլն։

Այդպիսի թեմատիկ ագիտ-ցուցափեղկերը լավ է լրացնել տեղական նյութերով՝ շրջանի, գյուղի աշխատավոր մասսաների, կոլխոզնիկների աշխատանքային սխրագործությունների օրինակներով. բրիգադների աշխատանքի փորձի նկարագրությամբ։

Որպես լրացում թերթի կտրվածքների, հանձնարարվում է ցուցափեղկում տեղավորել բրոշյուրներ, ամսագրեր, հանձնարարական գրականության ցուցակներ։ Այդպիսով թերթերի կտրվածքների ցուցափեղկերը նմանվում են գրքային ցուցահանդեսի և ընթերցողների համար ոչ միայն այս կամ այն հարցի նախնական ծանոթացում են, այլև գրականության ագիտացիա։

Թեմատիկ ագիտ-ցուցափեղկերը պետք է դարձնել նաև շարժական և փոխադրել բրիգադները, դաշտերը, ֆերմաները և այլն։

Թերթերի կտրվածքները նորերով փոխարինելիս հները չեն ոչնչացվում, այլ հավաքվում են թեմատիկ թղթապանակներում (պապկաներում) կամ ալբոմներում։ Այդպիսի թեմատիկ թղթապանակները և ալբոմները հետաքրքրությամբ ուսումնասիրում են ընթերցողները, դրանք մեծ օգնություն են ցույց տալիս ագիտատորներին, պրոպագանդիստներին և զրույցավարներին։

Թերթերի հոդվածների ցուցապրական ագիտացիան ագիտատորի կենդանի զրույցի հետ զուգակցվելով՝ առաջացնում է մեծ հե-

տարբերություն և դառնում մասսայական-քաղաքական աշխատանքի ազդեցիկ միջոց։

ԳՐՔԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատավորությանն այս կամ այն հարցի կապակցությամբ լավագույն գրականությանը ծանոթացնելու նպատակով գրադարանը գրականության տեսություններ է կազմակերպում։

Գրականության տեսությունները գրավում են ընթերցողների ուշադրությունը և գրքի պահանջ են առաջացնում։ Տեսություններ կարելի է կազմակերպել բազմապիսի թեմաների շուրջը և բնակչության տարբեր խմբերի հետ։ Հանձնարարվում է գրականության տեսություններ կազմակերպել հատկապես գրադարանային ակտիվի՝ ընթերցավարների, շրջիկավարների, գրքատարների հետ և այլն։ Տեսությունների թեման պետք է լինի հետաքրքիր և համապատասխան այն ընթերցողների խմբի գիտական մակարդակին, որոնց համար նշված է գրականության այդ տեսությունը։

Գրականության տեսությունը պետք է մեծապես օժանդակի աշխատավորության ընդհանուր պատրաստականությանը և ընդլայնի նրանց մտահորիզոնը։ Կարելի է կազմակերպել այնպիսի տեսություններ, որոնք օժանդակեն մարդկանց զբաղմունքին, որակավորեն նրանց աշխատանքը, նպաստեն ավելի խորը տիրապետելու իրենց աշխատանքի տեխնիկային։

Օրինակ՝ բրիգադիրների և կոլխոզային ակտիվի համար հետաքրքիր կլինեն կոլխոզի, բրիգադի աշխատանքի կազմակերպման վերաբերող գրքերի տեսությունները, գյուղական սովետի ակտիվի և դեպուտատների համար՝ գյուղի բարեկարգման, կուլտուրական շինարարության մասին եղած գրքերի տեսությունները, մայրերի համար՝ երեխաներին դաստիարակելու, խնամելու մասին եղած գրքերի տեսությունները։

Գրականության տեսությունները կարող են տեղի ունենալ գրադարանում՝ ցուցահանդեսի մոտ, գրական երեկոներում, բարձրաձայն ընթերցանություններից հետո, բրիգադների և օղակների արտադրական խորհրդակցություններում, խմբակների պարապմունքներին և այլն։

Հանձնարարվում է գրքերի տեսությունների անցկացման գործում ներգրավել նախ պրոպագանդիստներին, ագիտատորներին, ինչպես նաև գյուղատնտեսներին, բժիշկներին, ուսուցիչներին։

Ամենից ավելի դրադարանավարն ինքն է հանդես գալիս այս կամ այն գրքին վերաբերող բիբլիոգրաֆիական տեսություններով։

Նման տեսությունները նախապատրաստվում են այսպես։

Նշվում է գրքի տեսության թեման։ Վերանայվում են այդ թեմային վերաբերող հանձնարարական ցուցակները, գրականության ցանկերը, գրքերի տեսությունները, ամսագրերում և այլ տեղերում տպված հանձնարարական գրականությունը։ Ընտրվում է տեսության գրականությունը։ Ընթերցվում են նրան վերաբերող գրքերը և գրախոսականները։ Գրանցվում են գրքերի մասին եղած հիմնական տեղեկությունները։

Գրքի տեսության համար հանձնարարվում է վերցնել ոչ մեծ բանակությամբ գրքեր՝ 5—10։ Գրականության տեսությունը նախապատրաստելու ամենակարևոր մոմենտը գրքերի մասին եղած քննադատական գրականության ծանոթացումն է։

Տեսությունը կազմակերպելու համար անհրաժեշտ է գրի առնել յուրաքանչյուր գրքի մասին հետևյալ տեղեկությունները՝ 1) հեղինակը, 2) գրքի վերնագիրը, 3) գրքի բնույթը (դասագիրք, ձեռնարկ, հրահանգ, մենագրություն և այլն), 4) գրքի համառոտ բովանդակությունը, 5) նրա նշանակությունը մեզ համար. ինչո՞վ է արժեքավոր, 6) գրքի արժանիքը և պակասությունները, 7) լեզվի և տարադրման մատչելիության աստիճանը։ Գրականության տեսությունը պետք է լինի աշխույժ և հետաքրքիր։ Գրականության տեսությունների ժամանակ պետք է ցուցադրվեն գրքերը, որպեսզի ասողները լավ հիշեն գրանք։

Ձեռնամուխ լինելով գրքի տեսությանը՝ անհրաժեշտ է լսողներին համառոտակի ծանոթացնել տեսության թեմային։

Գրքերը դասավորվում են ըստ իրենց կարևորության։

Յուրաքանչյուր գրքի մասին հարկավոր է նշել հիմնականը։ Գրքի տեսությունը վերջանալուց հետո գրականությունը տրվում է բոլոր ցանկացողներին՝ կարդալու համար։

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ ԵՎ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Գրքի պրոպագանդայի ամենատարածված մասսայական միջոցառումներից մեկն էլ գրական երեկոները և ընթերցողների կոնֆերանսներն են, որոնք հնարավորություն են տալիս ընթերցողնե-

ին խորապես և բազմակողմանիորեն ծանոթանալու գրողի ստեղծագործությանը կամ առանձին գեղարվեստական երկերին։

Բանաստեղծ Ավ. Իսահակյանը գրքում և պատանի գրիչների հետ։

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՆԵՐ

Գրական երեկոները լինում են տարբեր բնույթի.

1. Երեկոներ՝ նվիրված մեկ գրողի ստեղծագործությանը (օրինակ՝ Թումանյանի, Շիրվանզադեի, Իսահակյանի, Դեմիրճյանի Ստ. Զորյանի, Ն. Զարյանի և այլն)։

2. Երեկոներ՝ նվիրված մեկ երկի, օրինակ՝ Ֆադեևի «Երիտասարդ գվարդիա»-ին, Ն. Զարյանի «Հայցավան»-ին, Հովհ. Շիրազի «Վիրիկա»-ին, և այլն:

3. Թեմատիկ գրական երեկոներ՝ նվիրված մի շարք երկերի՝ օրինակ՝ «Վենինը և Ստալինը հայ ժողովրդի պոեզիայում», «Հայ ժողովրդի հերոսական պայքարի արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ՝ Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում» և այլն:

Յուրաքանչյուր գրական երեկոյի հիմքը զեկուցումն է:

Գրական երեկոի ծրագիրը կազմվում է երկու հիմնական մասից՝ 1) զեկուցում և 2) գեղարվեստական մաս:

Ինչ պետք է անի շրջանային գրադարանն այդ ուղղությամբ:

Գրադարանը նախօրոք պայմանավորվում է այն կազմակերպությունների հետ, որոնք մասնակցելու են երեկոյին: Հրավիրում է զեկուցողին և գեղարվեստական մասի կատարողներին, վաղօրոք հայտնում է բնակչությանը կազմակերպվելիք երեկոյի մասին: Գրադարանը լայն նախապատրաստական աշխատանք է կատարում գրական երեկոյի համար, օգտագործում է գրականության ցուցագրական պրոպագանդայի բոլոր ձևերը՝ ցուցահանդեսներ, գրադարանային պլակատները, կազմակերպում է գրողի գեղարվեստական երկի բարձրաձայն ընթերցանություններ: Կազմակերպում է գրական երեկոյին նվիրված գրքային ցուցահանդես:

Երեկոն սկսվում է սովորաբար գրադարանավարի հակիրճ և լայնքով՝ երեկոյի նշանակության և խնդիրների մասին: Այնուհետև խոսքը տրվում է զեկուցողին: Որպես զեկուցող կարող է հանդես գալ գրականության դասատուն: Զեկուցմանը տրվում է 25—30 րոպե: Զեկուցումը կարող է մեջ ընդ մեջ ընդհատվել գեղարվեստական հատվածների ընթերցմամբ: Զեկուցումից հետո ունկնդիրները կարող են հարցեր տալ և ստանալ պատասխան, լրացուցիչ բացատրություն: Ընդմիջումից հետո սկսվում է գեղարվեստական մասը: Գրադարանը որպես գեղարվեստական մասի կատարողներ կարող է օգտագործել տեղական ուժերը՝ ակումբի դրամատիկական, երաժշտական, երգչային խմբերի մասնակիցներից:

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Ընթերցողների կոնֆերանսները գրական երեկոների այն տեսակն են, որոնք նվիրված են գրքի քննարկմանը: Դրանք այսպես ասած՝ ընթերցողների գրական-քննադատական կոնֆերանսներ են:

Այդ երեկոներում ներածական զեկուցումից հետո խոսքը տրվում է ընթերցողներին, որոնց ելույթները ընթերցողների կոնֆերանսի գլխավոր բովանդակությունն են։

Հանդիսատեսը ընթերցողների ելույթներին։

Ընթերցողների կոնֆերանսները կարող են նվիրված լինել ոչ միայն սրեալ գեղարվեստական երկի, այլ և գիտական, հասարակա-

կան-քաղաքական, գյուղատնտեսական գրքերի վերլուծմանը։ Օրինակ՝ գյուղատնտեսության վերաբերյալ գրականությունից կարելի է վերցնել ակադեմիկոս Լիսենկոյի «Բարձրացնել բերքն անհատական և կոլեկտիվ բանջարանոցներում» գիրքը, որի ամբիվ գրագրանը կազմակերպում է ընթերցողների կոնֆերանս։

Ընթերցողական կոնֆերանս։

Նախօրոք շրջանային գրադարանը պայմանավորվում է շրջանի գյուղբաժնի հետ, որը սրահ օգնություն գրադարանին, ընտրում է ագրոնոմներից որևէ մեկին։ Գրադարանավարը և ագրոնոմը մեկնում են կոլխոզ, նախօրոք կազմում են կոնֆերանսի պլանը և հարցերը, կոլխոզի վարչության անդամներին ծանոթացնում են կոնֆերանսի խնդիրները և տալիս նրանց թեմայի վերաբերյալ անհրաժեշտ գրականությունը։ Սկսվում են կազմակերպչական աշխատանքները, առանձնացվում են ընթերցող-զեկուցողներ, աշքի ընկնող տեղում ցուցադրվում են հարցերը և գրականությունը։ Գրքի բարձրաձայն ընթերցանության համար յուրաքանչյուր բրիգադում ընտրում են ընթերցավարներ. ագրոնոմը պայմանավորվում է կազմակերպել կոնսուլտացիաներ և նշում է օրերը այն ընթերցողների

համար, որոնք պատրաստվում են ելույթ ունենալ ընթերցողների կոնֆերանսում։ Միայն լուրջ, նախապատրաստական և կազմակերպչական աշխատանք կատարելուց հետո, կարելի է ապահովել ընթերցողների կոնֆերանսների հաջողությունը։

Ստորև տալիս ենք գյուղատնտեսական գրականության վերաբերյալ ընթերցողների կոնֆերանս կազմակերպելու թեման ընտրելու անհրաժեշտ ցուցումներ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

ԻՆՉՈՒ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության բուռն վերելքին ակտիվորեն օժանդակելու համար դրադարանները պետք է բարելավեն գյուղատնտեսական գրականության պրոպագանդան կոլխոզնիկների մեջ, սովխոզներում և ՄՏԿ-ներում։

Գյուղատնտեսական գրականության ընթերցողների կոնֆերանսները դրադարանի մասսայական աշխատանքների գործոն մեթոդներից մեկն են։ Պրակտիկան ցույց է տվել, որ կոնֆերանսները բարձրացնում են կոլխոզնիկների ագրոտեխնիկական գիտելիքները և օգնում են նրանց արտադրական աշխատանքում։ Կոլխոզնիկները նախապատրաստվելով կոնֆերանսին՝ նախօրոք ուսումնասիրում են իրենց հանձնարարված գյուղատնտեսական գրականությունը, իսկ կոնֆերանսներում քննում են, թե ինչ չափով են նրանց կոլխոզում կիրառվում գրքերում նշված ագրոտեխնիկական կամ ագրոզոոտեխնիկական (անասնաբուժական) կանոնները և խորհուրդները։ Կոլխոզնիկներն իրենց ելույթներում կատարում են նաև աշխատանքի փորձի փոխանակում։

Համ Կ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի փետրվարյան պլենումի որոշումը մեզնից պահանջում է ստանալ բարձր բերք բոլոր կուլտուրաներից։ Առանց ագրոտեխնիկական գիտելիքների տիրապետման անհնար է հասնել բարձր բերքի։

Սովորաբար կոնֆերանսներում ներկա են լինում ոչ միայն ընթերցողները, այլ և կոլխոզնիկները, շատ հաճախ գյուղատնտեսության վերաբերյալ գրքերի քննարկումն այնքան է հետաքրքրում նրանց, որ նրանք անդամագրվում են դրադարանին որպես ընթեր-

ցողներ և ձեռնամուխ են լինում գյուղատնտեսական գրականության ուսումնասիրությանը։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԻ ԵՎ ԳՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՐԵԼԻ Է ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Կոնֆերանսի հաջողությունը մեծ մասամբ կախված է այն բանից, թե որքա՞ն հաջող է ավյալ թեմայի ընտրությունը և ինչպիսի գրականություն է առանձնացված։

Կոնֆերանսի թեմատիկան կարող է լինել բազմազան, բայց պետք է գերադասել ամենահրատապ և կարևոր թեմաները։ Քննարկման համար կարելի է վերցնել առանձին կուլտուրաների. օրինակ՝ աշնանացան և գարնանացան ցորենի, եգիպտացորենի, կարտոֆիլի, բամբակի, մրգերի, հատկապես խաղողի ագրոտեխնիկային վերաբերյալ գրքեր։ Ագրոտեխնիկայի առանձին հարցերի վերաբերյալ կարելի է ընտրել այսպիսի թեմաներ՝

«Աշնանացանի խնամքը».
«Գյուղատնտեսական բույսերի պահպանումը».
«Ինչպե՞ս կարտոֆիլի բարձր բերք ստանալ».
«Ինչպե՞ս պայքարել երաշտի դեմ» և այլն։

Կամ անասնաբուծության վերաբերյալ՝

«Խոշոր եղջերավոր անասունների բուծումը».
«Խոզաբուծություն».
«Ձիաբուծություն».
«Թռչնաբուծություն» և այլ թեմաներ։

Թեմաները պետք է համապատասխանեն ավյալ կոլխոզի (տնտեսության) գյուղատնտեսության պահանջներին ու խնդիրներին։ Թեմաները ճիշտ ընտրելու համար յուրաքանչյուր գրադարանավար պարտավոր է մանրամասն կերպով ուսումնասիրել Համ(ք)Պ ԿԿ վեհաժողովի սլենումի որոշումը, որտեղ նշված են հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության զանազան կուլտուրաների և անասնապահության վերաբերյալ կոնկրետ խնդիրները և միջոցառումները։

Գրադարանավարը կոլխոզի վարչության միջոցով պարզում է թե ինչպի՞սի կոնկրետ առաջադրանքներ են դրված ավյալ կոլխոզի առաջ, ինչպիսի՞ ագրոզոոտեխնիկական հարցերի վերաբերյալ հատկապես անհրաժեշտ է կազմակերպել ընթերցողների կոնֆերանսներ։ Գրադարանավարը կոլխոզի նախագահի և մասնագետի (ագրոնոմի, զոոտեխնիկի) հետ որոշում է կոնֆերանսի թեման,

պայմանավորվում օրվա և տեղի մասին։ Այստեղ պետք է հաշվի առնել, թե տվյալ թեմաների շուրջը ինչպիսի գրականություն կա գրադարանում։

Ընթերցողների կոնֆերանսներին պետք է ուղեկցվեն գրքային ցուցահանդեսները, տվյալ թեմային վերաբերող գրքերի ցուցադրումը, դրանց պրոպագանդան։ Առանց անհրաժեշտ գրականություն ցուցադրելու կոնֆերանսը սովորական դասախոսության բնույթ կունենա։ Գրականությունն ընտրվում է մասնագետի (ագրոնոմի, զոոտեխնիկի) հետ։

Կոնֆերանսում քննարկման համար կարելի է վերցնել մեկ կամ մի քանի գիրք (որոնք նվիրված կլինեն մի թեմայի կամ մի հարցի)։ Խոզաբուծության թեմային նվիրված կոնֆերանսում կարելի է վերցնել գյուղատնտեսության առաջավորների, լավագույն խոզաբուծների աշխատանքի փորձի մասին եղած գրքերը։

Մի քանի գրքերի քննարկմանը նվիրված կոնֆերանսները հնարավորություն են տալիս յուրաքանչյուր կոլխոզնիկի ընտրելու իրեն անհրաժեշտ գիրքը։ Պետք է հոգ տանել գրադարանը նախօրոք ապահովելու այդ գրքերով, իսկ եթե տվյալ գրադարանում չկան, աշխատել ժամանակավորապես ձեռք բերել մյուս գրադարաններից։

Կոնֆերանսում քննարկելու համար անհրաժեշտ է ընտրել կոլխոզնիկների լայն մասսաներին մատչելի և հանձնարարելի գրքեր։ Գրականություն ընտրելիս օգտագործվում են հանձնարարական ցուցակները և բիբլիոգրաֆիական ուղեցույցները։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Գյուղատնտեսության գրականության կոնֆերանսի նպատակն է հեղյակ դարձնել կոլխոզնիկներին գյուղատնտեսության զանազան հարցերին նվիրված ագրոտեխնիկական կամ զոոտեխնիկական խորհուրդները, առաջավորների լավագույն փորձը։ Կոնֆերանսի նպատակն է ոչ միայն ակտիվ կերպով ներգրավել կոլխոզնիկներին գրքերի քննարկմանը, այլև կիրառել առաջավորների փորձը նրանց արտադրական աշխատանքում։

Կոնֆերանսը հաջող կազմակերպելու և անցկացնելու համար պահանջվում է նախապատրաստական մեծ աշխատանք։ Երբ որոշված է կոնֆերանսի թեման, ժամանակը և ընտրված է գրականությունը, գրադարանավարը մասնագետի հետ նշում է քննարկման անհրաժեշտ հարցերը։

Այնուհետև գրադարանը ինֆորմացիա է տալիս բնակչության՝ տեղի ունենալիք կոնֆերանսի մասին. զրույցների միջոցով (գրքերի տացքի ժամանակ), ելույթներում (կոլխոզնիկների ընդհանուր ժողովներում, բրիգադների, օղակների խորհրդակցություններում) և վերջապես համապատասխան պլակատների ու հայտարարությունների միջոցով գրադարանավարը կազմակերպում է քննարկման համար նշված գրականության պրոպագանդան։

Պլակատները նվիրվում են մեկ կամ մի քանի գրքերի պրոպագանդային։ Որպես օրինակ վերցնենք կարտոֆիլի ագրոտեխնիկային վերաբերող գրքերի պլակատի բովանդակությունը։ Այդ պլակատը կարող է լինել մոտավորապես այսպես.

1. Վերնագիր՝

«Ընկե՛ր կոլխոզնիկնե՛ր պատրաստվեցե՛ք կարտոֆիլի ագրոտեխնիկայի վերաբերյալ գրքերի քննարկմանը նվիրված ընթերցողների կոնֆերանսին»։

2. Տիտաս՝

«Այժմ, խաղաղ շինարարության անցնելուց հետո, մեր պարտիայի և պետության առաջ նորից, որպես ամենաանհետաձգելի խնդիր, ամբողջ հասակով ծառացավ գյուղատնտեսության այնպիսի վերելքի ապահովումը, որը թույլ տար ամենակարճ ժամկետում առնվազն պարենի առատություն՝ մեր բնակչության համար, հումքի՝ թեթև արդյունաբերության համար և պետական անհրաժեշտ պարենային ու հումքային ռեզերվների կուտակում»։

(Հետպատերազմյան ժամանակաշրջանում գյուղատնտեսության վերելքի միջոցառումների մասին. Համ-Կ(բ)Պ Կենտկոմի պլենումի որոշումը, ընդունված ընկ. Անդրեևի զեկուցման առթիվ։ Ե. Հայպետհրատ, 1947, էջ 6)։

3. Կոնֆերանսում քննարկելու համար անհրաժեշտ հարցերի ցուցակը, օրինակ՝

«Ինչպե՞ս ստանալ կարտոֆիլի բարձր բերք», «կարտոֆիլի խնամքի նոր ձևերը», «կարտոֆիլի ամառային տնկումը»,

Ն. Նկարագրեք գրքերի հայտիկներից եվ նրանց վերաբերող տեղեկատվությունները

Ե. Դիմում կոլխոզնիկներին՝

Կարդացե՛ք այս գրքերը»։

Հայտարարությունները և պլակատները փակցվում են ոչ միայն գրադարանում, այլև գյուղսովետի, կոլխոզի վարչության շենքերում, կուլտուրայի տներում, փոստային բաժանմունքում և այլն։

Կոնֆերանսի նախապատրաստման համար մեծ նշանակություն ունի նաև գյուղատնտեսական գրքերի վերաբերյալ բարձրաձայն ընթերցանությունների կազմակերպումը, որանց մասնակից է դարձվում կոլխոզնիկների մեծ մասը։ Բարձրաձայն ընթերցանությունները կատարվում են ոչ միայն գրադարանում, այլև կոլխոզի վարչության շենքում, կուլտուրայի տներում և այլն։

Կոնֆերանսի նախապատրաստման ժամանակաշրջանում, գյուղատնտեսական գրքերն ուսումնասիրող որոշ կոլխոզնիկներ կարող են առանձին հարցերի վերաբերյալ մասնագետների հետ խորհրդակցելու կարիք զգալ։ Այդ նպատակով, կոլխոզնիկների հետ կազմակերպվում են անհատական և կոլեկտիվ կոնսուլտացիաներ, որոնց մասին նրանց նախօրոք տեղյակ է դարձվում։

Գրքերի քննարկմանը կոլխոզնիկների մասնակցությունն ապահովելու համար գրադարանավարը նախօրոք պայմանավորվում է մի շարք կոլխոզնիկների—ընթերցողների (բրիգադավարների, օգակավարների, բարձր բերքի վարպետների) հետ, որպեսզի նրանք ելույթ ունենան կոնֆերանսում։ Միաժամանակ գրադարանավարը պարզում է, թե ո՞վ և ի՞նչ հարցի վերաբերյալ է ցանկանում ելույթ ունենալ. օգնում է նրանց նախապատրաստվելու։

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Կոնֆերանսը բաց է անում գրադարանավարը և իր ներածական ելույթում խոսում է կոնֆերանսի նպատակի մասին։ Այնուհետև 15—20 րոպեով խոսքը տրվում է մասնագետին (ագրոնոմին, զոոտեխնիկին)։ Վերջինիս ծանոթացնում է ներկա գտնվողներին տվյալ կոլխոզի առաջ դրված խնդիրներին և քննարկման համար նշված հարցերին։

Չի հանձնարարվում կոնֆերանսն սկսել մանրամասն զեկուցումով. այդպիսի զեկուցումից հետո կոլխոզնիկները հրաժարվում են ելույթներից, իսկ կոնֆերանսը կորցնում է իր արժեքը։ Պետք

Պիշել, որ կոլխոզնիկների ակտիվությունը գրքերի քննարկման գործում կախված է այն բանից, թե տվյալ մասնագետը ինչպիսի մոտեցմամբ է քննության դնում հարցերը և ինչ չափով է կարողանում արծարծել ունկնդիրների հետաքրքրությունը:

Գրադարանավարի և մասնագետի ելույթից հետո սկսում են ելույթ ունենալ կոլխոզնիկները: Պետք է ձգտել, որ ներկա գտնվողները նշեն, թե որքան են գրքերը օժանդակել նրանց կոլխոզի արտադրական աշխատանքում:

Ելույթները վերջանալուց հետո խոսքը տրվում է ագրոնոմին կամ զոոտեխնիկին, որը մանրամասնորեն լուսաբանում է հարցերը և ցուցմունքներ է տալիս, թե ագրոտեխնիկական կամ զոոտեխնիկական ինչպիսի միջոցառումներ պետք է գործադրվեն տվյալ կոլխոզում: Եթե կոլխոզնիկները դրադարանի նկատմամբ առաջարկներ և ցանկություններ ունեն, ապա դրանք գրանցվում են արձանագրության մեջ: Այդպիսով կոնֆերանսը վերջանում է:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Գրադարանի ամբողջ մասսայական աշխատանքը պետք է հաշվի առնվի. դրա համար պետք է օգտագործել՝ օրագիր՝ մոտավորապես հետևյալ ձևով.

Գրադարանի մասսայական աշխատանքների հաշվառման օրագիր

	Մասսայական աշխատանքի հաշվառումը (բարձրաձայն ընթերցանություններ, գրական երեկոներ, գրքի ցուցահանդեսներ և այլն)		
Ամիս, ամսաթիվ	Թեման և միջոցառումները	Սպասարկված ընթերցողների թիվը կամ հաճախումները	Գրագրանավարի նշումները կատարված աշխատանքի մասին (ով է անցկացրել, որտեղ, ներկաների ակտիվությունը, գնահատականը և այլն):
1/8	«Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Մատլինի կյանքն ու գործունեությունը» ցուցահանդես	500	Ցուցադրված է 55 գիրք, 15 իլյուստրացիա, 20 լուսանկար. Ձևավորեց գրագրանավար Սիմոնյանը: Ցուցահանդեսը վայելում է մեծ ժողովրդականություն:
10/5	Բարձրաձայն ընթերցանություն՝ «Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Մարիամ Մարտիրոսյանի աշխատանքի փորձը».	25 մ.	Կազմակերպեց՝ Ա. Մանուկյան. զրույցին մասնակցողները խոստացան կիրառել անվանի հերոսի աշխատանքի փորձը:
15/5	Գրական երեկո՝ նվիրված Ա. Իսահակյանի Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանի բանաստեղծություններին:	70 մ.	Ձեկուցող՝ Ա. Մարգարյան. բանաստեղծությունները կարդացին շրջանային թատրոնի դերասաններ Մարաֆյան, Մերկյան և Մալունցյան: Երեկոն անցավ հաջող:

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱԿՏԻՎԻ ՀԵՏ

Մասսայական և հատկապես դյուղական գրադարանների առաջ ծառացած են մեծ և պատասխանատու խնդիրներ, որոնք կարելի է իրագործել միայն այն դեպքում, երբ գրադարանավարը կարողանում է կազմակերպել գրադարանային մշտական ակտիվ։

Լենինը բազմիցս մատնանշել է գրադարանային աշխատանքի մեջ մասսաներին ներգրավելու անհրաժեշտությունը։

«Իլիչը գտնում էր, որ գրադարանային գործում ևս, ինչպես անգրագիտության վերացման ընդհանրում, կարևոր է, որ իրենք՝ մասսաները ձեռնամուխ լինեն այդ գործին։ Նրանց պետք է միայն սիստեմատիկաբար հրահանգավորել գրադարանային շինարարության հերթական խնդիրների մասին»[1]։

Ն. Կ. Կրուպսկայան գրադարանային ակտիվի մասին գրել է՝

«Շատ աշխատանք պետք է կատարել մասսայական ընթերցող նեվգրավելու համար։ Յուրաքանչյուր գրադարանում պետք է աճեցնել ընթերցողների ակտիվ, որը շատ բան կարող է անել գրադարանի աշխատանքը պատշաճ բարձրության վրա դնելու համար»[2]։

Գրադարանի աշխատանքի ծավալն ու բովանդակությունը այնքան մեծ է ու բազմազան, որ միայն գրադարանավարը և վիճակի չէ այդ աշխատանքը կատարելու։ Նրան պետք է օգնեն ակտիվիստները՝ դրքատարները, շրջիկվարները, կոնսուլտանտները, ընթերցավարները և այլն։

Ակտիվի կազմակերպումը մեկ օրվա գործ չէ, ակտիվը հայտնաբերվում և ձևավորվում է գրադարանի ամենօրյա պրակտիկ աշխատանքի պրոցեսում։

Ակտիվի ներգրավման համար կարելի է օգտագործել զանազան միջոցներ։ Նախ՝ պետք է դիմել ընթերցողների օգնությանը, հայտնաբերել առավել ակտիվ, սիստեմատիկորեն գրադարան հաճախողներին։

Ակտիվի ներգրավման համար գրադարանը պետք է սերտորեն կապված լինի պարտիական և կոմերիտական կազմակերպությունների հետ։ Հարկավոր է ձգտել, որ գրադարանին օգնելու համար առանձնացվեն կոնսուլտանտներ, դասախոսներ, զրուցավարներ։

---

[1] Կրուպսկայա Ն. Կ.—Լենինը գրադարանների մասին, Երևան, Պետհրատ, 1938 թ. էջ՝ 80.

[2] Նույն տեղ. էջ՝ 81

Ընթերցանության ժամին։

Ն. Կ. Կրուպսկայան գյուղական գրադարանների աշխատանքների մասին գրել է.

«Ումի՞ց պետք է կազմված լինի ակտիվը։ Դրանք առաջին հերթին պետք է լինեն պարտիականները։ Յուրաքանչյուր պարտիական պետք է իմանա, թե ինչ նշանակություն էր տալիս գրադարաններին Լենինը, ինչպես է պարտիան օգնում ամրացնելու գրադարանային գործը։ Անհրաժեշտ է, որ նա գրադարանին հոգ տանի այնպես, ինչպես իր զավակին, ջանա, որ գրադարաններում լինեն լավագույն գրքեր, որ դրանք ավելի լայնորեն ընթերցվեն և այլն։ Անհրաժեշտ է, որ գրադարանի շուրջը կազմակերպվի կոմերիատական ակտիվ, որը պատասխանատու լինի այն բանի համար, թե ինչպես է գրադարանն սպասարկում բնակչությանը, ակտիվ, որը գրադարանի համար ընթերցողներ ներգրավի»[1]։

Գրադարանը պետք է սերտ կապ ունենա գյուղական սովետ-

---

[1] «Красный библиотекарь» № 1. 1940 г. стр. 32.

...երի հետ, որոնք պետք է ոչ միայն իրականացնեն պետական ...կազմությունն ու օժանդակեն գրադարաններին նյութապես, այլև ...ժանդակեն գրադարանի շուրջն ակտիվ ստեղծելու։



Մանչարյանց գրադարանի վերակառուցման ընթացքում։

Հավաքագրելով ակտիվիստներին՝ անհրաժեշտ է որոշել, թե ինչպիսի աշխատանք պետք է կատարի յուրաքանչյուր ակտիվիստ, նկատելով նրա կուլտուր-քաղաքական մակարդակը։ Ակտիվ ընթերցողներից ամենագրագետ ու քաղաքականապես պատրաստված

մարդկանց՝ կոմերիտականներին, գյուղական ինտելիգենցիային, առաջավոր կոլխոզնիկներին և կոլխոզնիկուհիներին պետք է օգտագործել բարձրաձայն ընթերցանությունների, զրույցների համար։ Գյուղական գրադարանի պայմաններում ընթերցանությունը, զրույցը մասսայական աշխատանքի հիմնական մեթոդներից մեկն է։

Բարձրաձայն ընթերցանությունները, զրույցները հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է ակտիվից առանձնացնել մշտական ընթերցող—զրուցավարների խումբ։

Գյուղական ինտելիգենցիային՝ դասատուներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և մյուսներին հարկավոր է օգտագործել որպես դասախոսներ և կոնսուլտանտներ։

Հատկապես կարևոր է օգտագործել ակտիվի այդ խումբը ինքնակրթության գործը լավ կազմակերպելու համար։ Գյուղական գրադարանավարը չի կարող պատասխան տալ այն բոլոր հարցերին, որոնք ունենում են ընթերցողները գիրքը կարդալիս։ Այստեղ անհրաժեշտ է մասնագետների օգնությունը, որոնք միաժամանակ կարող են խոշոր օգնություն ցույց տալ նաև գրադարանի կոմպլեկտավորման և գրքային ֆոնդի վերանայման աշխատանքներում։

Գյուղական գրադարանավարը մեծ ուշադրություն պետք է դարձնի գրքատարների և շրջիկվարների—(շրջիկ գրադարանավարների) ընտրությանը։

Գրադարանավարի խնդիրն է՝ ձգտել, որ շրջիկ գրադարանի վրա աշխատեն կուլտուրապես ու քաղաքականապես զարգացած, գրագետ և ակտիվ մարդիկ։ Այդ աշխատանքը պահանջում է գրադարանավարից՝ «ունենալ մասսային մոտենալու, մասսայի հետ աշխատելու հմտություն, իմանալ նրա պահանջները, կարողանալ նրա հետաքրքրությունն ուղղել որոշակի հունով, զարթնեցնել ընթերցողի ինքնագործունեությունը, նրանց մեջ հրահանգավորման մեծ աշխատանք տանել»[1]։

Գրադարանավարը պետք է կարողանա ճանաչել մարդկանց, իմանա նրանց ունակությունները, կուլտուր-քաղաքական պատրաստականությունը։

Ակտիվի աշխատանքի որակը կախված է գրադարանավարից, այսինքն նրա պարզորոշ հրահանգավորումից և ամենօրյա ղեկավարությունից։ Նախքան ակտիվիստին որևէ աշխատանք հանձնա-

---

[1] Կրուպսկայա. Ն. Կ—Լենինը գրադարանների մասին։ Երևան, Պետհրատ, 1938 թ., էջ՝ 77։

դարձը, պետք է, ինչպես հարկն է, նրան հրահանգավորել։ Յուրաքանչյուրին հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որն ակտիվիստը համարում է հետաքրքիր և ցանկալի։ Ոչ մի ստիպողականություն չպետք է լինի այս գործում։

Ակտիվին ղեկավարելու հիմնական մեթոդը անհատական և խմբակային հրահանգավորումն է։ Օրինակ՝ գրադարանավարը հանձնարարում է ակտիվիստին ելույթ ունենալ կոլխոզնիկների ժողովում գրադարանի պրոպագանդայի նպատակով. դրա համար անհրաժեշտ է ակտիվիստին մանրամասնորեն ծանոթացնել գրադարանի աշխատանքներին, գրադարանից օգտվելու կանոններին, գրադարանում եղած ամենից ավելի հետաքրքիր գրքերին և նշել նրա ելույթի պլանը։

Մի ուրիշ օրինակ. գրադարանը պայմանավորվել է դյուղատընտեսի հետ՝ դասախոսություններ կարդալու համար։ Նրան հարկավոր է հայտնել, թե ընթերցողների ինչպիսի կազմի համար պետք է կարդացվի ավելի դասախոսությունը, ինչպիսի գրքեր կան գրադարանում այդ հարցի վերաբերյալ, ինչպիսի պահանջ կա այդ գրքերի նկատմամբ։ Այստեղ պետք է նշել, թե ինչպիսի նախապատրաստական աշխատանք է հարկավոր տանել ընթերցողների մեջ, դասախոսության թեմային վերաբերող ինչպիսի գրականություն հանձնարարել, ինչպես կազմակերպել գրքի ցուցահանդեսը և այլն։ Ինչպես տեսնում ենք՝ նաև այս դեպքում գրադարանավարը անհատապես հրահանգավորում է։

Խմբակային հրահանգավորում է կատարվում նրանց համար, ում աշխատանքը միատեսակ է, ինչպես օրինակ՝ գրքատարները, ընթերցավարները, զրուցավարները։ Ակտիվի բոլոր այդ խմբերը սովորաբար ամրացվում են աշխատանքային որոշակի տեղամասերի՝ բրիգադներին, օղակներին և այլն։

Ակտիվի յուրաքանչյուր խմբին անհրաժեշտ է սիստեմատիկ հրահանգ և ամենօրյա օգնություն. գրքեր տալու ժամանակ պետք է ճշգրիտ ցույց տալ, թե ինչ կարդալ, ընթերցանությունը—զրույցը նախապատրաստելու համար ինչպիսի նյութ օգտագործել, ինչպիսի հարցերի վերաբերյալ զրույց կազմակերպել։

Շրջիկվարները, գրքատարները պետք է ծանոթ լինեն այն գրքերի բովանդակությանը, որոնք տրվելու են ընթերցողներին։

Շրջիկվարների և գրքատարների համար գրադարանային տեխնիկայի հարցերի՝ այսինքն գրքերը պահպանելու, հաշվառելու մա-

սին խմբակային հրահանգ է տրվում։ Ակտիվի համար գոսպ տիարակչական խոշոր, նշանակություն ունեն գրական երեկոներ և գրականության տեսությունները։

Կոնսուլտացիա ընթեցող ակտիվի հետ։

Գրադարանային ակտիվի հիմնական աշխատանքը՝ գրքի պրոպագանդան է, իսկ որպեսզի հաջող տարվի այդ պրոպագանդան. ակտիվիստները պետք է իմանան գրքի բովանդակությունը։ Այդ գործում անհրաժեշտ է ակտիվին սիստեմատիկ օգնություն ցուցաբերել։ Ահա թե ինչու անհրաժեշտ է նրանց համար կազմակերպել գրքերի տեսություններ, գրական երեկոներ, տարբեր հարցերի վերաբերյալ առանձին կամ մի շարք գրքերի քննարկումներ և այլն։

Գրադարանային ակտիվի աշխատանքում չափազանց խոշոր նշանակություն ունի սոցիալիստական մրցությունը։ Կարելի է կազմակերպել մրցություն գրադարանային աշխատանքի այս կամ այն բնագավառում, օրինակ՝ նոր ընթերցողների ներգրավման, գրականության մասսայականացման, գրքի պահպանման և այլն։

Յուրաքանչյուր ակտիվիստ պետք է ունենա անհատական պարտականություն ըստ իր ստանձած աշխատանքի։ Այդ պարտա-

կանությունները կարելի է գեղեցիկ գրել և կախել դրադարանում, կամ դնեղել պատի թերթում։ Դրադարանավարը պետք է միշտ հետևի մրցության ընթացքին, ստուգի մրցման մեջ մտած ակտիվիստների պարտականությունների կատարումը, հայտնաբերի լավագույն ակտիվիստներին։ Շատ կարևոր է, որ ակտիվիստների ընդլայնված խորհրդակցությունում քննարկվեն և նշվեն լավագույն ակտիվիստները, ցույց տրվի նրանց լավ աշխատանքը և փարձի փոխանակման կարգով այն հաղորդվի մյուսներին։

Սոցմրցության ծավալման, ինչպես նաև ակտիվի ամբողջ աշխատանքի համար պատասխանատու է դրադարանավարը։

Այս բոլորից հետևում է, որ ակտիվի կազմակերպումը և դաստիարակումը մասսայական դրադարանների և հատկապես գյուղական դրադարանների աշխատանքների կարևորագույն բնագավառն է։

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Ընկեր Ժդանովը Լենինգրադի պարտիական ակտիվի և դրագների ժողովում ունեցած իր ելույթում ասել է.

«Սովետական երիտասարդ սերնդին վիճակված է ամրապնդելու սովետական սոցիալիստական հասարակարգի ուժն ու հզորությունը, սովետական հասարակության շարժիչ ուժերը լիովին օգտագործելու մեր բարեկեցության ու կուլտուրայի նոր, աննախընթաց ծաղկման համար։ Այդ մեծ խնդիրների համար երիտասարդ սերունդը պետք է դաստիարակվի՝ դառնալով կայուն, առույգ, խոշընդոտներից չվախեցող, այդ խոշընդոտներին ընդառաջ գնացող և դրանք հաղթահարելու ընդունակ։ Մեր մարդիկ պետք է լինեն կրթված, բարձր գաղափարական մարդիկ, կուլտուրական, բարոյական բարձր պահանջներով և ճաշակով։ Այս նպատակի համար մեզ անհրաժեշտ է, որ մեր դրականությունը, մեր ամսագրերը մի կողմ թաշված չլինեն արդիականության խնդիրներից, այլ պարտիային և ժողովրդին օգնեն երիտասարդ սերունդին դաստիարակելու սովետական հասարակարգի նկատմամբ անհուն նվիրվածության ոգով, ժողովրդի շահերին անձնվիրաբար ծառայելու ոգով»[1]։

---

[1] Ժդանով Ա. Ա.—«Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին. Երևան, Հայպետհրատ, 1946, էջ 35—36։

Մեր գրադարաններն իրենց ամենօրյա աշխատանքում պետք է զեկավարվեն այս պատմական ցուցումներով, յուրաքանչյուր գրադարանավար պետք է ձգտի գրադարանում ներգրավել ավելի շատ ընթերցող, իր ամբողջ ուժն ու եռանդը գործադրի, գիրքը, թերթը, ամսագիրը քաղաքի և գյուղի աշխատավորական մասսաներին հասցնելու համար, օգնի մեր սովետական ընթերցողներին, երիտասարդ սերնդին՝ գաղափարապես զինվելու, տիրապետելու Լենինի—Ստալինի մեծ ուսմունքին։

Գրադարանավարը մասսայական միջոցառումներին պետք է դիմի նոր ընթերցողներ ներգրավելու համար։ Որքան գրադարանը լայնորեն ծավալի գրքի բանավոր և ցուցադրական պրոպագանդան, այնքան գրադարանը մեծ անուն ձեռք կբերի աղգաբնակչության մեջ և նույնքան շատ կլինի ընթերցողների հաճախումը։ Տարեցտարի աճում, լայնանում է մասսայական գրադարանների ցանցը, ավելանում են գրքային ֆոնդերը։ Դրա համար գրադարանը պետք է աղգաբնակչությանն իրազեկ պահի այդ բոլորին։

Պետք է կապ պահպանել պարտիական, կոմերիտական, պրոֆեսիոնալ, դպրոցական, պիոներական և այլ կազմակերպությունների հետ, նրանց ժողովներում զեկուցումներ, ելույթներ ունենալ նոր ընթերցողներ ներգրավելու համար, օգտագործելով նաև շրջանային, պատի թերթերը և ռադիոն։

Գրադարանի գլխավոր աշխատանքն է՝ ամեն մի գրագետ մարդու մեջ զարթնեցնել ընթերցանությունը, գրքի և գրադարանի սեր և դրանով իսկ բարձրացնել գրադարանի դերն ու նշանակությունը։

Գրադարանի համար մղվող ագիտացիոն աշխատանքները հետևյալներն են՝

Նախ և առաջ գրադարանը տեղյակ է դարձնում մասսաներին գրադարանի գոյության մասին, և դրա համար օգտագործում է ինֆորմացիայի զանազան ձևեր, օրինակ՝ գրադարանները պարտավոր են փակցնել ցուցանակ գրադարանի կամ ակումբի դռանը, ցույց տալով աշխատանքի օրերը և ժամերը։ Անհրաժեշտ է գրել հայտարարություններ գրադարանի մասին և փակցնել պարտիական, կոմերիտական, սովետական, պրոֆմիութենական հիմնարկներում և կազմակերպություններում (շրջսովետ, գյուղսովետ, ժողդատարան, փոստ, կոլխոզվարչություն, ՄՏԿ, դպրոց, ճաշարան, ակումբ, կայարան և այլն)։ Այդպիսի հայտարարություններ կարելի է գրել տախտակի, ստվարաթղթի կամ հաստ թղթի վրա՝ այսպես։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

_____ _____ գրադարանը գտնվում է
(գրադարանի անունը, տիպը)

_____ _____ (փողոց, տուն № _____)

Գրադարանը բաց է ամեն օր, բացի _____ օրերից

Մեծահասակների համար ժամը _____ ից _____ ը

Փոքրահասակների համար ժամը _____ ից _____ ը

Գրադարանը պետք է ունենա աշխատանքի կայուն օրեր և ժամեր, որոնք հայտնի պետք է լինեն ամեն ոքի: Գրադարանի աշխատանքի օրերը և ժամերը չպետք է խախտել: Գրադարանի աշխատանքային ռեժիմը պետք է բխի տվյալ գրադարանի կանոնադրության պահանջներից:

Գրադարանը սիստեմատիկորեն տեղյակ է դարձնում ընթերցողներին նոր ստացված գրքերի, ամսագրերի, թերթերի մասին և այլն:

Գրադարանը հանրակացարաններում, ցեխերում, կոլխոզ վարչություններում և այլ տեղերում կազմակերպում է գրադարանային անկյուն, որի համար սենյակի մի անկյունում կամ որևէ հարմար տեղ տախտակի վրա գրում է՝ «Գրադարանային անկյուն» կամ «Գրադարանային ինֆորմացիա», այնուհետև սիստեմատիկաբար փակցնում է այստեղ նոր լույս տեսած գրքերի ցուցակը, հիշեցումներ ընթերցողներին՝ ուշացրած գրքերի մասին, ինչպես և գրադարանից օգտվելու կանոնները:

Որպեսզի ընթերցողը պարբերաբար տեղյակ լինի գրադարանում եղած և նոր ստացված գրքերին, գրադարանն ամիսը մեկ անգամ շրջանային, կոլխոզի, ՄՏԿ-ի և դպրոցների ընթերթերում կարող է դնեցնել նոր գրքերի ցուցակը: Տեղի ռադիո հանգույցի միջոցով ազդարարությունը կարելի է հաճախակի տեղյակ պահել գրադարանի աշխատանքների մասին:

Կինոներում ցուցադրությունից առաջ դիտողներին կարելի է ծանոթացնել նոր ստացված գրքերի ցուցակը:

Կոլխոզի ընդհանուր ժողովներում, գյուղսովետի սեսիաներում, կոլխոզի վարչության և դպրոցի ծնողական ժողովներում գրադարանի վարիչը կարող է ելույթ ունենալ գրադարանի աշխատանքների և գրքերի մասին:

Դասախոսությունների, զեկուցումների ժամանակ գրադարանավարը պարտավոր է տվյալ դասախոսության կամ զեկուցման թեմային համապատասխան գրականություն առանձնացնել կամ ցուցահանդես կազմակերպել։

Գրադարանի ակտիվի միջոցով պետք է կազմակերպվեն շրջիկ գրադարաններ, կոլխոզի դաշտերում, հանրակացարաններում, ֆերմաներում, ՄՏԿ-ներում և այլն։

Գրադարանը պետք է լուրջ աշխատանք կատարի կիսագրագետներին ներգրավելու, նրանց համար պետք է ձեռք բերել և առանձնացնել հետաքրքիր գրքեր, կազմակերպել գրքատարության բարձրաձայն ընթերցանություններ։ Բոլոր կիսագրագետներին հարկավոր է հաշվի առնել և ամեն ամիս ստուգել, թե որքան կիսագրագետ է սպասարկվել։

Ընթերցողներին ներգրավելու լավագույն միջոցներից մեկն էլ գրադարանային դասերն ու զրույցներն են մեծահասակների գրասրահներում։ Դրանք կարող են կազմակերպվել հետևյալ թեմաներով՝ «Գրքի և գրադարանի նշանակությունը», «Ինչպե՞ս օգտվել բառարաններից, հանրագիտարաններից», «Ինչպես կազմել պլան և գրել կարդացածի հիմնական միտքը»։ Այդ զրույցները կամ դասերը կարող են անցկացնել դասատուն կամ գրադարանավարը։ Որպեսզի կարելի լինի ընթերցողին կապել գրադարանի հետ, գրադարանավարը պետք է ուշադիր, հոգատար վերաբերմունք ցուցաբերի։ Պետք է ընթերցողն զգա, որ գրադարանը միշտ ձգտում է օժանդակել իր կուլտուրական-քաղաքական սեմանը։ Մշտապես անհրաժեշտ է պարզել, թե ինչ պատճառով է, որ այս կամ այն ընթերցողը գադարել է գրադարան հաճախել։ Դրա համար պետք է նամակ գրել, տուն գնալ, գործի դնել բոլոր միջոցները, որպեսզի ընթերցողը դարձյալ կապվի գրադարանին, պետք է հայտնել նոր լույս տեսած գրքերի, նրա պահանջած գրքերի ստացման մասին։

Ընթերցողները գրադարանի ագիտատորներն են։

Ակտիվ ընթերցողները կարող են խոշոր օգնություն ցույց տալ աշխատավորությանը գրադարանի մեջ ներգրավելու գործում։ Գրադարանավարը պետք է սերտ կապ պահպանի նրանց հետ, ունենա ակտիվ ընթերցողների հաշվառում։

Ընթերցողին ներգրավելու միջոցառումներից բացի՝ գրադարանավարը չպետք է մոռանա գրքի կորուստների և գրքերի ուշացման դեմ պայքարելը։ Սիստեմատիկաբար հիշեցումներ պետք է

անել, գրել կամ սրել մեկի միջոցով հայտնել, ինչպես և պարտավանքի ու պատասխանատվության ենթարկել անբարեխիղճներին, որոնք գրքի՝ սոցիալիստական սեփականության նկատմամբ կցուցարերեն հանցագործ վերաբերմունք։

ԱՇԽԱՏԱՆՔՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ՀԵՏ, ԴԱՍ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրադարանում տարվող աշխատանքները՝ ֆոնդերի կոմպլեկտավորումը, հաշվառքը, գրքերի գրադարանային ձևավորումը, մի խոսքով գրադարանի ամբողջ կազմակերպչական—տեխնիկական գործունեությունը պետք է ծառայի մի նպատակի՝ սովետական ընթերցողների կուլտուրական պահանջները բավարարելու, նրանց բազմակողմանիորեն և լիովին գիրք ու գրականություն ապահովելու նպատակին։

«Գրադարանավարը սոսկ տեխնիկական աշխատող չէ, ոչ էլ մեխանիկորեն գիրք բաժանող, նա բոլշևիկյան կուլտուրայի պրոպագանդիստն ու ագիտատորն է։ Նրա ամբողջ աշխատանքը պետք է տոգորված լինի բոլշևիկյան զգաստությամբ և պարտիականության ոգով»։

«Սովետական գրադարանային աշխատողների առաջ կանգնած է մեծ և պատվավոր խնդիր՝ օգնել մեր հայրենիքի աշխատավորությանը տիրապետելու բոլշևիկյան կուլտուրային, որը բովանդակում է այն ամենալավը, ինչ ստեղծել է մարդկությունը։ («Պրավդա»-ի 1937 թ. օգոստոսի 31-ի «Գրադարանային գործ» առաջնորդողից)։

Ահա սովետական գրադարանավարի առաջ դրված հիմնական խնդիրները։

Գրադարանավարը ոչ միայն պետք է պրոպագանդա մղի Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի աշխատությունների խորը ուսումնասիրության ուղղությամբ, օգնի ընթերցողներին գրագետության, կենդանի խոսքով՝ խորը և բազմակողմանի կերպով ուսումնասիրելու բոլշևիկյան պարտիայի պատմությունը, այլև պետք է տեղյակ դարձնի ընթերցողներին ընթացիկ քաղաքականության հարցերին, միջազգային դրությանը, պարտիայի և կառավարության որոշումներին։ Գրադարանը պետք է օգնի ընթերցողներին անհրաժեշտ գիտելիքներ ձեռք բերելու (հանրակրթական

տեխնիկական, գյուղատնտեսական, ռազմական, քաղաքական և այլն) գործում։

Գրադարանը քաղաքական, պատմական և գեղարվեստական գրականության օգնությամբ պետք է ցույց տա ընթերցողներին սովետական իրավակարգի առավելությունը, սոցիալիստական պետության ուժն ու զորությունը, մեր հայրենիքի հարստությունները, ՍՍՌՄ-ի ժողովուրդների հերոսական անցյալը, սովետական ժողովուրդների կուլտուրայի նշանակությունը, նրա նվաճումները։ Գրադարանավարը ծանոթացնում է աշխատավորներին կլասիկների և ժամանակակից սովետական գրականության երկերին, զարգացնում ընթերցողների գեղարվեստական ճաշակը, օգնում է նրանց՝ քննադատորեն մոտենալու, իսկ հիմնականում մերժելու փտած, դաղափարազուրկ և գռեհիկ երկերը, բուրժուական քաղքենիական վեպերն ու պատմվածքները։ Գրադարանի ընթերցողների հետ տարվող աշխատանքի խնդիրն է՝ ընթերցումը դարձնել բովանդակալից, գրքերի ընտրությունը՝ գաղափարականապես բարձր և սիստեմատիկ։ Ընթերցողների հետ տարվող աշխատանքի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել նրանց անհատական հատկությունները՝ տարիքը, հանրակրթական և մասնագիտական կրթությունը, գահանջները։ Անհրաժեշտ է տարբեր մոտեցում ունենալ ընթերցողին, տարբեր ընթերցողներին տարբեր ձևով սպասարկել. միևնույն հարցի վերաբերյալ գրադարանավարը տարբեր ընթերցողներին հանձնարարում է տարբեր գրքեր։ Գրադարանավարը պետք է կարողանա հմտորեն մոտենալ ընթերցողին, հանձնարարել նրան այն գրքերը, որոնք հատկապես հետաքրքիր և օգտակար կլինեն նրան։ Գրադարանավարը պետք է ուսումնասիրի ընթերցողներին։

Ուսումնասիրման հիմնական մեթոդը գրադարանավարի անձնական շփումն է բնակչության, մասսայի հետ, գրադարանավարի ակտիվ մասնակցությունը շրջանի, գյուղի և կոլխոզի հասարակական կյանքին։

Այս բոլորից հետևում է, որ գրադարանավարը պետք է սիստեմատիկորեն օգնի ընթերցողներին՝ նրանց ընթերցանության թեմատիկան խորացնելու և ընդլայնելու։ Նա պետք է գրքի միջոցով հաստատացնի մեր ընթերցողների մտահորիզոնը, դաստիարակի նրանց մեջ անվեհերություն, աշխատանքային հերոսություն Ստալինյան նոր հնգամյակի իրագործման ու կոմունիզմի կառուցման

գործում և վերջապես դաստիարակի ընթերցողների մեջ ռևոլյուցիոն զգոնություն և սեր դեպի սոցիալիստական հայրենիքը։ Այդ արդյունքներին հասնելու համար բավական չէ միայն գրքեր մատակարարել ընթերցողին, այլ անհրաժեշտ է ղեկավարել նրա ընթերցանության գործը։ Դրադարանավարը պետք է հոգ տանի ոչ միայն գրքեր ընտրելու մասին, այլև այն մասին, որ ընթերցումը դարձնի նպատակասլաց, որպեսզի մեկ թեմայից կամ գրքից մյուսին անցնելը կատարվի որոշ հետևողականությամբ։ Դրադարանավարը պետք է ուսումնասիրի ընթերցողների տարբեր խմբերի պահանջները։ Առանձնապես կարևոր է ուսումնասիրել արդյունաբերության և գյուղատնտեսության նոր կադրերի, բանվորական և կոլխոզային երիտասարդության պահանջները։ Կիրառելով երիտասարդության

Դրվի տացը։

նկատմամբ ընդհանուր քաղաքական-դաստիարակչական խնդիրները, գրադարանները հաշվի են առնում նաև երիտասարդության յուրաքանչյուր խմբի պահանջները և ըստ այնմ կազմակերպում են նրանց դիֆերենցիալ սպասարկումը։ Կարևոր է առանձնակի ուշադրություն դարձնել Հայրենական պատերազմի հաշմանդամ ընթերցողներին։ Դրադարանը պետք է օգնի նրանց՝ կուլտուրական մտա-

տորիպոնն ընդլայնելու և զանազան մասնագիտություններ ձեռք բերելու։

Շրջանի պարտիական և սովետական ակտիվը, կոլխոզային ակտիվը, գյուղատնտեսության մասնագետները, տեղական ինտելիգենցիան ընթերցողների որոշակի խմբերն են։ Գրադարանը պետք է ուսումնասիրի ընթերցողների այս բոլոր խմբերը և բավարարի նրանց բազմազան պահանջները։

Այդպիսով գրադարանի ողջ աշխատանքը հիմնվում է ընթերցողների և նրանց հետաքրքրության սահմանների բազմակողմանի ուսումնասիրության ու դիֆերենցիալ մոտեցման վրա։

Ընթերցողների սպասարկումը արտահայտվում է տարբեր ձևով՝ աբոնեմենտում գրքերի տացքով, ընթերցասրահում, տեղեկատու բիբլիոգրաֆիական աշխատանքներով՝ գրքերի, թերթերի, ժուռնալների և այլ հրատարակությունների մասսայական պրոպագանդայով։

ԳՐՔԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Վերևում մենք նշեցինք, որ գրադարանավարն ընթերցողների նկատմամբ պետք է ունենա դիֆերենցիալ մոտեցում, որ նա ոչ միայն պետք է սպասարկի և գրականություն հանձնարարի այլ և զրադվի ընթերցողների բաղաքական-դաստիարակության խնդիրներով։

Գրադարանավարը չպետք է սահմանափակվի միայն ընթերցողների մասին եղած ձևական տեղեկություններով, այլ պետք է նախօրոք զրույց ունենա ընթերցողի հետ։ Զրույցից գրադարանավարը պարզում և իմանում է, թե ի՞նչն է բերել ընթերցողին գրադարան, ի՞նչ սպասելիքներ նա ունի գրադարանից, ի՞նչ է փնտռում գրքերում և ի՞նչպիսի հարցերով է նա այժմ հետաքրքրվում. կարդո՞ւմ է թերթեր և ի՞նչ գրքեր են նրան դուր եկել և հետաքրքրում։ Այս բոլոր տեղեկությունները շատ անհրաժեշտ են գրադարանավարին՝ ընթերցողների հետ տարվող աշխատանքի համար։ Այնուհետև, գրադարանավարը ծանոթացնում է ընթերցողին գրադարանից օգտվելու կանոնները, հիշեցնում և բացատրում է նրան գրքի, որպես սոցիալիստական սեփականության նկատմամբ հոգատար լինելու անհրաժեշտությունը, ցույց է տալիս կատալոգները և բացատրում է նրանցից օգտվելու կանոնները։

Ընթերցողական կատալոգների մոտ։

Հետագայում գրադարանավարի առաջ ծառանում է ամենահիմնական հարցը՝ ինչպիսի՞ գիրք հանձնարարել ընթերցողին—հաճախ ընթերցողներն իրենք հեշտացնում են այդ խնդրի լուծումը, պահանջելով այս կամ այն գիրքը։ Այդ դեպքում գրադարանավարին մնում է պարզել հանձնարարելի՞ է արդյոք պահանջվող գիրքը, դրանից հետո միայն նա կարող է բավարարել ընթերցողի պահանջը։ Սակայն պատահում է նաև, որ ընթերցողի պահանջն անորոշ է լինում, այդ դեպքում գրադարանավարն ստիպված է լինում ճշտել և ուղղել ընթերցողի պահանջը., Օրինակ՝ ընթերցողը պահանջում է «Кавказский Пленник» («Կովկասյան գերին») գիրքը. հայտնի է, որ այդպիսի երկեր ունեն՝ Պուշկինը, Լերմոնտովը. և Տոլստոյը։ Գրադարանավարն այստեղ պարզում է, թե ընթերցողը ո՞ր գրողի երկն ի նկատի ունի։ Հաճախ պատահում է նաև, որ ընթերցողի պահանջը կրում է ընդհանուր բնույթ. օրինակ՝ նա խնդրում է գիրք տրակտորների մասին ընդհանրապես, սակայն պարզվում է, որ նրան ահրաժեշտ է գիրք տրակտորի էլեկտրոսարքավորման վերանորոգման մասին։ Նման դեպքերում գրադարանավարը ճշտում և որոշակի է դարձնում ընթերցողի պահանջը։

Պատահում է, որ տվյալ գիրքը տրված է կամ գրադարանը չունի. այդ դեպքում գրադարանավարը պետք է ցուցաբերի մեծ հմտություն՝ այդ գիրքը մեկ ուրիշ համապատասխան գրքով փոխարինելու համար։ Հաճախ ընթերցողը խնդրում է գրադարանավարից՝ «որևէ գիրք տալ» կամ «ընտրել որևէ հետաքրքիր գիրք»։ Այդպիսի դեպքերում պետք է պարզել, թե ի՞նչ է հետաքրքրում ընթերցողին։

Ընթերցողի ֆորմուլյարը նայելով՝ գրադարանավարը պարզում է նրա մասնագիտությունը, կրթությունը, կարդացած գրքերը։ Այնուհետև գրադարանավարը զրուցում է ընթերցողի հետ այդ գրքերի մասին, ծանոթացնում է նրան նոր գրքերը[1], ցուցահանդեսները, բիբլիոգրաֆիական նյութերը, հանձնարարական ցուցակները և գրքերի վերաբերյալ քննադատությունները։ Ընթերցանությանը նպատակային և ցանկալի ուղղություն տալու համար կարելի է ընթերցողին առաջարկել մի շարք թեմաներ, և դրանց վերաբերող գրքեր, օրինակ՝ մեր առաջնորդներ Լենինի և Ստալինի կյանքի ու

---

[1] Ընթերցողի անորոշ պահանջը հաճախ առաջանում է նրանից, որ նա չգիտի ընթացիկ գրականությունը. նոր լույս տեսած գրքերը։

գործունեության, նոր հնգամյա պլանի, գյուղատնտեսության վերելքի մասին հետպատերազմյան ժամանակաշրջանում, Հայրենական Մեծ պատերազմի, քաղաքացիական պատերազմի, պարտիայի պատմության, ՍՍՌՄ պատմության վերաբերյալ, գյուղատնտեսության կամ տեխնիկայի որևէ բնագավառին վերաբերյալ (որ համապատասխանի տվյալ ընթերցողի արտադրական մասնագիտությանը) և այլ թեմաներ։

Գրքի հանձնարարումը ընթերցողներին։

Ամեն անգամ գիրք տալիս գրադարանավարը պետք է զրույցի մեջ մտնի ընթերցողի հետ. հանձնարարի գրքերը. հակիրճ կերպով բնութագրի տվյալ գիրքը։ Այդ աշխատանքը կատարելու համար յուրաքանչյուր գրադարանավար պարտավոր է իմանալ գրքերը։

Ի՞նչ կարող է պատմել գրադարանավարն ընթերցողին տվյալ գրքի մասին՝ գրքի հակիրճ բովանդակությունը, նրա քաղաքական, գաղափարական կողմը, իդեական հագեցածությունը և պարտիականությունը: Այդպիսով գրադարանավարը համառոտակի բնութագրում է գիրքը:

Գիտական կլասիկ աշխատությունների տացքի ժամանակ գրադարանավարը նշում է նրանց նշանակությունը գիտությունների պատմության մեջ. գիտա-հանրամատչելի գրքեր հանձնարարելիս ընթերցողներին հայտնում է, որ այդպիսի հրատարակությունները մատչելի են, ինչպես և աշխույժ, պատկերավոր և հետաքրքիր բացատրություններ ու այլ առավելություններ ունեն:

ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ԶՐՈՒՅՑՆ ԸՆԹԵՐՑՈՂԻ ՀԵՏ ԳՐՔԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԻՍ

Որոշ ընթերցողներ վերադարձնելով կարդացած գրքերը՝ իրենց տպավորությունները հաղորդում են գրադարանավարին, կարծիք են հայտնում գրքի մասին և այլն: Այս հանդամանքն օգնում է գրադարանավարին ընթերցողի և գրքի ուսումնասիրման գործում: Սակայն ոչ բոլոր ընթերցողներն են, որ արտահայտում են իրենց կարծիքը կարդացած գրքերի մասին. մի մասն էլ ուղղակի դժվարանում կամ քաշվում է կարծիք հայտնել տվյալ գրքի մասին: Այդպիսի ընթերցողների հետ գրադարանավարը ջանում է զրույցի բռնվել գրքերի մասին, որպեսզի պարզի, թե ինչ չափով է գիրքը հետաքրքրել, գրավել ընթերցողին և ինչպես է նա այն ըմբռնել ու գնահատել:

Գրականության հետագա ընտրությունը կախված է այդ հարցերը պարզելուց: Եթե գիրքն ընթերցողին դուր է եկել, կամ նրա թեմատիկան հետաքրքրել է նրան, այդ դեպքում կարելի է առաջարկել նույն թեմատիկայով այլ գրքեր., Օրինակ՝ ընթերցողին դուր է եկել Ֆուրմանովի «Չապաևը», նրան հետաքրքրել է քաղաքացիական պատերազմի հերոսականը. այդպիսի ընթերցողին կարելի է առաջարկել նաև Ն. Օստրովսկու «Ինչպես էր կոփվում պողպատը», Ա. Ն. Տոլստոյի «Հացը», Ֆադեևի «Ջախջախումը», Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղը», Պերվենցևի «Կոչուբեյը», Վ. Իվանովի «Պարտիզանական» և այլն: Եթե ընթերցողը ցանկանում է ավելի խորը կերպով ուսումնասիրել քաղաքացիական պատերազմի շրջանը, ապա նրան պետք է հանձնարարել Համկ(բ)Պ պատմության համա-

ռոտ դասընթացի ութերորդ գլուխը, Լենինի և Ստալինի աշխատությունները քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի մասին։



Գրադարանավարի զրույցը ընթերցողի հետ։

Եթե գիրքը դուր չի եկել ընթերցողին, պետք է պարզել դրա պատճառները. կարող է պատահել, որ գրքի թեման հետաքրքրել է ընթերցողին, սակայն գիրքն անհասկանալի ու դժվար ըմբռնելի է ընթերցողի համար, օրինակ՝ ընթերցողը վերադարձնում է Ա. Գ. Լորխի գիրքը՝ «Կարտոֆիլի բարձր և կայուն բերք ստանալու միջոցները», և հայտարարում է, որ այդ գիրքը քիչ բան է տվել իրեն։ Պարզվում է, որ տվյալ գիրքն ընդգրկում է մեծ քանակությամբ վիճակագրական աղյուսակներ և դիագրամներ, խիստ տեսական բովանդակություն, այլ կերպ ասած՝ տվյալ գիրքը մատչելի չէ ընթերցողին։ Այստեղից գրադարանավարը եզրակացնում է, որ ընթերցողին անհրաժեշտ է մի ավելի պարզ, պրակտիկ ձեռնարկ։ Ելնելով վերոհիշյալից՝ գրադարանավարն առաջարկում է ընթերցողին ավելի

հանրամատչելի ձևռնարկներ, ինչպես օրինակ՝ ակադեմիկոս Լիսենկոյի «Բարձրացնել բերքն անհատական և կոլեկտիվ բանջարանոցներում» կամ «Ինչպես ստանալ կարտոֆիլի բարձր բերք» գիրքը։

Եթե տվյալ գրքից ընթերցողի համար մնացել են անհասկանալի տեղեր, գրադարանավարն աշխատում է բացատրել ընթերցողին, օգտագործելով այդ նպատակի համար տեղեկատուներ, բառարաններ և այլ օժանդակ ձեռնարկներ։ Պատահում է, որ գրադարանավարը չի կարողանում լրիվ բացատրել այն, ինչ ընթերցողը չի հասկացել. այդպիսի դեպքերում նրան պետք է ուղարկել կոնսուլտանտի, մասնագետի, դյուղատնտեսի կամ դասատուի մոտ։

ՄԱՍՍԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱՆԵԼԻՔՆԵՐՆ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գրադարանն ինքնակրթության և ինքնուրույն ուսուցում կազմակերպելու հիմնական բազան է։ Ժամանակակից բոլոր գիտությունների հիմունքներին տիրապետելու, գիտելիքների համապատասխան պաշար ձեռք բերելու ուղղությամբ կատարած ինքնուրույն (առանց դասատուի օգնության) աշխատանքն օժանդակում է անհատի մարքս-լենինյան աշխարհայացքի ձևավորմանը։

Լենինը դեռ 1920 թվի հոկտեմբերին հանդես գալով Կոմկուսակցության 3-րդ համագումարում, երիտասարդությանը կոչ արեց սովորել, մանրամասնորեն կանգ առավ այն հարցի վրա, թե ինչ և ինչպես պետք է սովորել, թե ինչպիսի հսկայական նշանակություն ունի ուսուցումը, ինչպես այն սերտորեն կապված է կոմունիզմի կառուցման գործի հետ։

Գրադարանները խոշոր անելիքներ ունեն ընթերցողների ինքնակրթության գործում։ Ինքնակրթությամբ զբաղվողներին լուրջ օգնություն ցույց տալու նպատակով անհրաժեշտ է գործադրել բոլոր օժանդակ ձևերը, օրինակ՝ դասախոսությունները, կոնսուլտացիաները, զրույցները, հարց ու պատասխանի երեկոները, էքսկուրսիաները, խմբակային պարապմունքները և այլն։ Այս բոլորը խիստ օժանդակում են ինքնակրթության գործին։ Բայց այդ բոլոր ձևերից ամենահիմնականը անմիջական աշխատանքն է գրքի հետ։ Այդ տեսակետից գրադարանը պետք է ամենից առաջ ընթերցասի-

թյուն գարնանային բնակչության մեջ, ակտիվորեն աշխատի ընթերցողների հետ։

Բոլոր դրադարանների հիմնական խնդիրն է ինքնակրթությամբ զբաղվողների մեջ արմատացնել գրքի վրա ինքնուրույն կերպով աշխատելու ունակություն, քանի որ «Գիրքն այն գլխավոր աղբյուրն է, որից մասսան կարող է գիտություն քաղել» (Կրուպսկայա)։

Ինքնակրթության գործի կազմակերպման համար անհրաժեշտ է որոշ նախապատրաստական աշխատանք կատարել։

Ինքնակրթության աշխատանքը դրադարանում այնպես պետք է կազմակերպվի, որ նա մատավորապես ընդգրկի տվյալ առարկայի սիստեմատիկ դասընթացի հիմնական մոմենտները (եթե կազմակերպվում է արդեն դպրոց ընդգրկվածների համար), օժանդակի ավանդվող դասընթացի յուրացմանը։

Ինքնակրթության աշխատանքի գնահատությունը պետք է գրքի դրադարանի ամենապատրաստված աշխատողի վրա։

Ինքնակրթության և ինքնուրույն ուսուցման գործը չպետք է կրի ձևական և պատահական բնույթ, այլ պետք է լինի պլանային և կազմակերպված։ Հաշվի առնելով ընթերցողների պահանջները, պետք է այդ գործում ներգրավել տեղական բարձրագույն ուժերին՝ մասնագետներին, դասախոսներին, դրականագետներին և մյուսներին։ Հաճախ շրջանային կամ գյուղական դրադարանավարը չի հասցնում, կամ ի վիճակի չի լինում պատասխան տալու ընթերցողների բազմապիսի հարցերին, որոնք ծագում են նրանց մեջ գրքի ընթերցանությունից։ Հետևաբար անհրաժեշտ է կազմակերպել կոնսուլտացիաներ մասնագետներ հրավիրելով. օրինակ՝ ագրոնոմը, բժիշկը, դասատուն կամ այլ մասնագետներ կարող են հանդես գալ որպես կոնսուլտանտներ։ Շատ հաճախ հենց ինքը դրադարանավարը կարող է լինել կոնսուլտանտը։

Յուրաքանչյուր ընթերցող, որ զբաղվում է ինքնակրթությամբ, պետք է իր ձեռքի տակ ունենա անհրաժեշտ ձեռնարկներ և ուղեցույցներ, անհրաժեշտ բառարաններ, ընթերցանության համար առավել կարևոր գրքերի հանձնարարական ցուցակ։ Այդ ձեռնարկների առկայությունն ինքնակրթությամբ զբաղվողների աշխատանքը կդարձնի շատ ավելի արդյունավետ։

Բոլոր այս հարցերում ինքնակրթությամբ զբաղվողին օգնում է դրադարանավարը, օգնում է ինքնուրույն կերպով գրքի, թերթի

վրա աշխատելուն, կազմում է հանձնարարական գրականության ցուցակներ, կազմակերպում է նրանց համար դասընթացների և մասնագետների կոնսուլտացիաներ։ Գրադարանը առանձնակի ուշադրություն պետք է դարձնի մեծահասակ աշխատավորներին և երիտասարդներին, հաշվի առնելով՝

1. Այն ընթերցողներին, որոնք ցանկանում են գիտելիքներ ձեռք բերել համապատասխան ուսումնական հաստատության ծրագրի սահմաններում,

2. Այն ընթերցողներին, որոնք ցանկանում են սիստեմատիկ ընթերցանությամբ աշխատանքի ու մասնագիտության գծով իրենց գիտելիքներն ընդլայնել ու ամրապնդել,

3. Այն ընթերցողներին, որոնք շնորհք ու ընդունակություն են հանդես բերում գիտության ու կուլտուրայի այս կամ այն բնագավառում։

Անհրաժեշտ է ինքնակրթության գործը կազմակերպել նաև գրադարանի հետ դեռևս չկապված աշխատավորության մեջ։

Այս աշխատանքները կատարելուց հետո անհրաժեշտ է գրադարանում ընթերցողների համար մի քանի զեկուցումներ, զրույցներ կարդալ՝ «Ինչպես ինքնակրթությամբ պարապել», «Ինչպես աշխատել գրքի վրա», «Ինչպես ինքնուրույն ձևով աշխատել միջնակարգ դպրոցի ծրագրով նախատեսված նյութերի վրա» և այլ թեմաներով։

Այնուհետև գրադարաններում պետք է առանձնացնել համապատասխան գրականություն։ Ընտրած գրականությունն անհրաժեշտ է տեղափոխել հատուկ տեղ՝ պահարանում կամ դարակում և կամ թողնել իրենց տեղերում՝ կազմի վրա որևէ գունավոր տարբերանշան դնելով։ Կարելի է գրքերը թողնել իրենց տեղերում, բայց կազմել ինքնակրթությանը վերաբերող գրականության սիստեմատիկ կատալոգ։

Այդ նպատակի համար պետք է լայնորեն օգտագործել միջգրադարանային աբոնեմենտը։

Անհրաժեշտ է աշխատանքի համար նորմալ պայմաններ ստեղծել ընթերցասրահում կամ աբոնեմենտային բաժնում։ Կարելի է կազմակերպել նաև ինքնակրթության անկյուն, այն կահավորելով դիտողական պարագաներով (քարտեզներ, գլոբուս, դիագրամներ, սխեմաներ, պլակատներ և այլն)։ Պետք է կազմել հանձ-

սարարական ցուցակներ. մեթոդական ցուցումներ, ծրագրեր, պարբերական մամուլի նյութեր և այլն։

Շրջանում, գյուղում գրադարանի տարած ինքնակրթության աշխատանքները պետք է սերտորեն կապված լինի՝ կուլտուր-լուսավորական հիմնարկների (ակումբների, կուլտ. տների) աշխատանքի հետ։

Հաշվի առնելով տեղի հնարավորությունները, գրադարանները ակումբների հետ համատեղ պետք է կազմակերպեն ինքնակրթության խմբակներ՝ գրական, պատմական, աշխարհագրական, բնագիտական, ագրո-զոոտեխնիկական և այլ թեքումներով։ Ինքնակրթության գործը ղեկավարելու համար անհրաժեշտ է այդ աշխատանքի մեջ ներգրավել տեղերի կարող ուժերին՝ ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսության մասնագետներին և այլն։

Գրադարանները պետք է կիրառեն անվճար կոնսուլտացիայի ձևը. դրա հիմնական խնդիրը պետք է լինի պարզաբանել ինքնակրթությամբ զբաղվողի համար բարդ և չպարզված հարցերը, գրքի վրա աշխատելու, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքի այլ ձևերը և. այլն։ Կոնսուլտացիաները նախապես պետք է պլանավորվեն, պետք է նախօրոր նախապատրաստվեն նրանց տեղն ու հարմարությունները։

Ինքնակրթության գործի կազմակերպման մեջ գրադարանը, ակումբը և թանգարանը պետք է իրար օգնեն։ Գրադարանը պետք է կուլտուրայի տանն ու ակումբում կատարվող դասախոսությունների ու զեկուցումների մասին նախապես հայտնի ինքնակրթության գործի մեջ ընդգրկվածներին։

Գրադարանում ինքնակրթության գծով կատարված ամբողջ աշխատանքի համար պետք է հաշվառում պահել։

Ինքնակրթության գործը հաջող կազմակերպելու լավագույն երաշխիքն այդ գործի ղեկավարի քաղաքական ու գիտական պատրաստականությունն է։ Այդ տեսակետից գրադարանի աշխատողները պետք է նախ և առաջ համառ կերպով աշխատեն հենց իրենց քաղաքական-տեսական ու գիտական մակարդակը բարձրացնելու վրա։

ԳՐՔԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Գրքատարները գրադարանի ակտիվ օգնականներն են։ Նրանց միջոցով գիրքը տարածվում է գյուղական աշխատավորների մեջ։

Յուրաքանչյուր գրադարանի խնդիրն է՝ ըստ հնարավորին շատ ընթերցող ներգրավել գրադարանում, շատ մարդ կապել գրքի հետ։ Այս հարցում մեկ օգնում է գրքատարությունը։ Գրքատարները գրքերն առած շրջագայում են տներում, բակերում, հիմնարկներում, այն մարդկանց շրջանում, որոնք դեռ տվյալ գրադարանի հետ կապված չեն. գրքատարներն ընթերցողներից ընդունում են նրանց համար անհրաժեշտ գրականության պատվերներ, հանձնարարում են գրքեր։

Որպեսզի գրքատարը կարողանա հանձնարարել այս կամ այն գիրքը, նրան անհրաժեշտ է անպայման ծանոթանալ տրվելիք գրքի բովանդակության հետ, պատմել, թե ինչով է հետաքրքիր այս կամ այն գիրքը, ինչպիսի գիրք ում պետք է հանձնարարել։

Դաշտային աշխատանքների ժամանակ հանձնարարվում է բրիգադներում, օղակներում ունենալ գրքատար։ Սա շաբաթը մեկ անգամ կատարում է իր շրջագայությունը։ Յուրաքանչյուր մեկնումից առաջ գրքատարը ստանում է գրադարանից 10—15 գիրք՝ տարբեր հարցերի վերաբերյալ, վերցնում է իր հետ ընթերցողների ֆորմուլյարները կամ շրջիկ գրադարանի ընթերցողների տետրակը։

Սիստեմատիկորեն, 1,5—2 ամիսը մեկ անգամ գրադարանը կազմակերպում է գրքատարների փորձի փոխանակման վերաբերյալ խորհրդակցություն, որտեղ քննվում են կոլխոզնիկների լավագույն սպասարկման, գրականության հանձնարարման, գրադարանի համար նոր գրքեր հայթայթելու հարցերը։

ԳՐԱԴԱՐԱՆ – ԱՎՏՈՄԵՔԵՆԱ

Գրադարան-ավտոմեքենան կոլխոզնիկների և գյուղական ինտելիգենցիայի մեջ գիրք տարածելու նոր ձևերից մեկն է։ Իրականացվում են մեծ Լենինի այն պատգամները, որ մեր երկրի միլիոնավոր մարդիկ գրքեր կարդան իրենց տանը, և գիրքը որքան կարելի է լայն շրջանառություն կատարի ժողովրդի մեջ։ Սովետական ընթերցողների պահանջները բազմազան են, նրանք ձգտում են տիրապետել մարքսիզմ-լենինիզմին, ուսումնասիրում են մեծ առաջնորդներ Լենինի և Ստալինի՝ կյանքը, ձգտում են տիրապետել գիտության տարբեր ճյուղերին, տարբեր մասնագիտություններին, աշխատում են դասվել Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների

շարքը, ցանկանում են յուրացնել բարձր բերքի պանծալի վարպետների փորձը, ձգտում են բարձրացնել իրենց քաղաքական-գաղափարական և կուլտուրական մակարդակը։

Գրադարան-ավտոմեքենան, որը կարող է պարունակել մինչև 1200 գիրք, մեծապես օժանդակում է հեռավոր վայրերում գտնվող այն շրջաններին և գյուղերին, որտեղ չկան ստացիոնար գրադարաններ. գրադարան-ավտոմեքենան ընթերցողին անհրաժեշտ գիրքը արագ կերպով տեղ է հասցնում։ Նրա գործունեությունը չի սահմանափակվում միայն գրքերի, ժուռնալների և թերթերի հետ կատարվող աշխատանքներով։ Գրադարան-ավտոմեքենան մեծ աշխատանք է կատարում նաև կուլտուր-լուսավորական միջոցառումների ուղղությամբ։ Տվյալ շրջանի պրոպագանդիստները, դասախոսները գրադարան-ավտոմեքենայի հետ մեկնում են շրջանի գյուղերը և հասարակական-քաղաքական, բնագիտական և գյուղատնտեսական թեմաների շուրջը զրույցներ ունենում։ Գյուղերում կազմակերպվում են միջազգային դրության, տեխնիկայի, գեղարվեստական գրականության գծով գործող ինքնագործ խմբակների աշխատանքները։ Հաճախ գրադարան-ավտոմեքենայի կանգառման տեղը վեր է, ածվում ժողովրդական տոնահանդեսի։

ՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՐԱԴԱՐԱՆ-ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գրադարան-ավտոմեքենան շրջանային գրադարանի ֆիլիալն է։ Նրա նպատակն է՝ գյուղական բնակչության գրականություն մատակարարել։ Աշխատանքի պլանը և գրադարան-ավտոմեքենայի ուղեգծերը հաստատում են շրջանի կուլտ-լուս-աշխատանքների բաժինը և պարտիական կոմիտեն։ Գրադարան-ավտոմեքենայի աշխատանքը մտցվում է շրջանային գրադարանի տարեկան և եռամսյակային պլանների մեջ։

ԳՐԱԴԱՐԱՆ—ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՐՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿՈՄՊԼԵԿՏԱՎՈՐՈՒՄԸ

Գրադարան-ավտոմեքենայի գրքային ֆոնդը համարվում է շրջանային գրադարանի գրքային ֆոնդի մի մասը և գրանցվում է վերջինիս գրքամատյանում։

Գրադարան-ավտոմեքենայի գրքային ֆոնդն ընդգրկում է հա-

սարակական-քաղաքական, արվեստի, տեխնիկայի, գյուղատնտեսության, ինչպես և գիտության զանազան հարցերին վերաբերող հիմնական գրականությունը, գեղարվեստական գրականության լավագույն երկերը, միջնակարգ դպրոցների դասագրքեր, ձեռնարկներ, տեղեկատու հրատարակություններ և բառարաններ։

Գրադարան-ավտոմեքենայի վարիչը յուրաքանչյուր ուղեվորության համար ընտրում է ընթացիկ տնտեսական-քաղաքական կամպանիաների, տեխնիկայի և գյուղատնտեսության ակտուալ հարցերին վերաբերյալ մասսայական գրականություն, կոմպլեկտավորում է մասսայական ամսագրերի վերջին համարները և կենտրոնական ու տեղական թերթերի ամսական կոմպլեկտները։

ԳՐԱԴԱՐԱՆ—ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Գրադարան-ավտոմեքենայի հերթական ուղևորությունից առաջ տեղի է ունենում.—

ա) մարշրուտի մշակումը և աշխատանքի պլանի կազմումը.

բ) Գրադարան-ավտոմեքենայի ֆոնդի վերակոմպլեկտավորումը նոր գրքերով, ամսագրերով և գրականությամբ՝ ըստ ընթերցողների անհատական պահանջի.

գ) Գրքային ցուցահանդեսների, գրադարանային պլակատների և հանձնարարական ցուցակների ձևավորումը, բարձրաձայն ընթերցանությունների համար գրականության ընտրությունը։

Գրադարան-ավտոմեքենայի վարիչը տեղ հասնելուն պես՝

ա) կապ է հաստատում տեղական ղեկավար կազմակերպությունների հետ և հայտնում է նրանց գրադարան-ավտոմեքենայի աշխատանքների պլանը.

բ) հայտարարություններ է փակցնում և գրադարան-ավտոմեքենայի ժամանման մասին հայտնում է բնակչությանը։

Բնակավայրում գրադարան-ավտոմեքենան՝

ա) ընթերցողներին անհատապես գրքեր է տալիս.

բ) կազմակերպվում է ժամանակավոր ընթերցանություն (ամառը՝ բացօդյա, ձմեռը՝ գյուղական ակումբում, կոլխոզի վարչության շենքում, դպրոցում և այլն).

գ) Կազմակերպում է բնակչության մեջ մասսայական աշխատանք (բարձրաձայն ընթերցանություններ, զրույցներ, գրականության տեսություններ, գրական երեկոներ և այլն).

դ) կատարում է տեղեկատու-ինֆորմացիոն աշխատանք։

***

Հարուստ ու բազմազան են մասսայական աշխատանքները։ Դրաղարանավարը համոզված պետք է լինի, որ իր աշխատանքի բովանդակությունը մասսայական միջոցառումների հաջող կազմակերպման և անցկացման մեջ է։ Դրա համար այդ աշխատանքը պետք է դրվի դրադարանավարի ուշադրության կենտրոնում։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		Էջ
1	Դրադարանավարի գաղափարական դաստիարակությունը	3
2	Դրադարանների մասսայական աշխատանքի խնդիրները	7
3.	Բարձրագույն ընթերցանություններ և դրույցներ	8
4.	Դրքային ցուցահանդեսներ	18
5.	Դրադարանային սլլակատ	30
6.	Թերթերի ցուցափեղկեր	33
7.	Դրքի բիբլիոգրաֆիական տեսություններ	36
8.	Դրական երեկոներ և ընթերցողների կոնֆերանսներ	37
9	Դրադարանի մասսայական աշխատանքի հաշվառումը	48
10.	Դրադարանի աշխատանքն ակտիվի հետ	49
11.	Դրադարանի աշխատանքն ընթերցողներ ներդրավելու գործում	55
12	Աշխատանքն ընթերցողների հետ. նրա խնդիրները և բովանդակությունը	59
13.	Մասսայական դրադարանների անելիքներն ընթերցողների ինքնակրթության և ինքնուրույն ուսուցման գործում	68
14.	Դրքատարություն	71
15	Դրադարան-ավտոմատ	72



Գլխ. խմբագիր՝ Լ. ՄԵԼԲՈՒՄՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Սրբագրիչ՝ Գ. ՄԻՐԶՈՅԱՆ
Կոնտ. սրբագրիչ՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
Ցուցս նկարները՝ Վ. ԱՄԱԼՅԱՆԻ

ՎՖ 00924, պատվեր № 80, տիրաժ 2000:

Հանձնված է արտադրության 14/II 1949 թ.
Ստորագրված է տպագրության 29/III 1949 թ.
Տպագրական 4¾ մամուլ:

Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի տպարան,
Երևան, Կիրովի № 12, 1949 թ.:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0023972

ԳԻՆԸ 5 ՌՈՒԲԼԻ

A II 4704

ЦЕНА